1895 ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 (6 Դեկտ.) ՈՒՐԲԱԹ

№. 136—ՏԱՍՆԵՐԵՔՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ . 136

1895 ՆՈՅԵՄԲԵՐԻ 24 (6 Դեկտ.) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենտրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏՆԸ (Վերամինովսկի փողոց, № 22, տուն Խանղամանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 Ռ. ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 Ռ.

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“, իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang“

Յայտարարութիւններ ընդունվում՝ են հայերէն եւ օտար լեզուներով։

1896-Ի ՔԱՋԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱՆ

Այն անձինքը և հաստատութիւնները, որոնք ԱՅԺՄԷՆ ԻՍԿ կը ստորագրուին 1896 թուի „Արձագանք“-ին, կը ստանան համարները բաժանորդ գրուելու օրից՝ վճարելով ընդամենը տասը ռուբլի։

ՊԱՀԵՍՏ Գ. ԱԴԷԼԽԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ.
Գործարանների արդիւնաբերութեանց
Միջի-փողոցի և Երևանեան հրապ. անկիւն, նախկին գեներալ Տէր-Ասատուրովի տանը։
Առաջիկայ ձմեռուայ համար պահեստում, ի միջի այլոց, կան՝ եափընջու կտորից պատրաստած—կանանց համար ծածկոցներ (լոտօնկի)՝ զանազան գոյների, և զինուորականների ու տղամարդոց համար վերարկուներ նոյն կտորից, եւս եւ թաղիքից տաք ոտնամաններ և զանազան գների եափնջիներ (լեզգու տեսակը) իր բաշլուղներով։
Բոլորն էլ ծախվում են գործարանի գներով։ (10—9)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Գերմանացոց կայսեր գահական ճառը։
Սպանուածներ, վնասներ, աննկարագրելի կարիք։
Հրահանգներ Կ. Պոլսի դեսպաններին։
Հոր եռապետական համաձայնութիւն։
Երկրորդ պահականաւերի առաքման նպատակը։
Իտալիայի պատգամաւորների պայմանը։
Եւրոպական մամուլը և հայկական խնդիրը։
Դաւառների դրութիւնը։
Գործը կիսատ չի մնալ։
Բարոն Բլանի զեկուցումը.—Զէյթունի ապստամբութիւնը։
Իրերի դրութիւնը արևելքում։
Կ. Պոլսում։
Հաճքնի դէպքերը։
Պաշտօնական տեղեկութիւններ և իրական փաստեր։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Գ. կառավարչապետի ուղեորութիւնը Պետերբուրգ։ Հրաման Կովկասի պ. կառավարչապետի։
Գեներալ Պէրլիկի ուղեորութիւնը Պետերբուրգ։ Մի նոր ընկերութիւն։ Արգահանի շրջանի գիւղերի բնակիչների օժանդակութիւն։ Նամակ Ղարայից։ Ուլիկոսիէից։ «Վլադիմիր» շոգենաւի խորտակման գործի քննութիւնը։ Երկրորդ և երրորդ քառանուագ երեկոյթները.—Բեգէր քոյրերի երկրորդ նուագահանդէսը։ Գ. Ամիրջանեանի յաջողութիւնը։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ
ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Բաղէշից։
ՖԵԼԻԷՏՕՆ. — Մի քանի եօթնեակ «Կովկասի հանքային ջրերի բուժավայրում»։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԳԵՐՄԱՆԱՑՈՑ ԿԱՅՍՐԻ ԳԱՀԱԿԱՆ ՃԱՌԸ
«Ռուս. գործակալ.» հեռագիր.
Բերլին 22 Նոյեմբերի.
Ռայխստագը բացուեց գահական

ճառով, ուր հայկական խնդրի առթիւ հետեւեալը կայ «Օսմանեան պետութեան մէջ կատարուած տխուր դէպքերը և նրանց ստեղծած իրերի դրութիւնը իրենց վրայ գարձրին գերմանական կառավարութեան ամենայուրջ ուշադրութիւնը։ Հաւատարիմ մնալով իւր դաշնակցութիւններին և գերմանական քաղաքականութեան սկզբունքներին՝ կառավարութիւնը միշտ պատրաստ է այդ խնդրի մէջ առաւել շահակից պետութիւնների հետ ի միասին գործել՝ խաղաղութեանը ծառայելու համար և, յարգելով գոյութիւն ունեցող դաշնագիրները, սուլթանի կառավարութեանը պաշտպանութիւն ցոյց տալ՝ իրերի բնական կարգը վերականգնելու համար»։ Գահական ճառի վերջում յայտնւում է, թէ «հաստատ յոյս կայ, որ պետութեանց միացեալ ուժերը յաջողվեմամբ կը պսակուին»։

—

ՍՊԱՆՈՒԱԾՆԵՐ, ՎՆԱՍՆԵՐ, ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ ԿԱՐԻՔ

Հեռագիր «Ռուս. գործակալ.»
Վիեննա 15 Նոյեմբերի.

Կ. Պոլսից հաղորդում են „Politische Corrospondenz“-ին, թէ մոտերս անգլօ - հայկական կոմիտէի հրատարակած տեղեկութիւնները Փոքր-Ասիայում տեղի ունեցած կոտորածների վերաբերմամբ չափազանցրած են։ Հաւատի տեղեկութիւններին նայելով, Փոքր - Ասիայի քաղաքներում շփոթութեանց ժամանակ սպանուած հայերի թիւն է 15,000։ Գիւղերում սպանուածների թիւը ներկայումս չի կարելի հաշուել։ Նոյնպէս չափազանցրած են նիւթական վնասների գումարը, որ անգլիական ապրիւրներով 10 միլիոն լիրայի է հասնում։ Ճիշտ գումարը հաղիւ թէ այդ թուի $^1/_3$ կամ $^1/_2$ լինի։

Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի, Սեբաստիայի և Հալէպի վիլայէթներում աննկարագրելի կարիք է տիրում։

—

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ Կ. ՊՕԼՍԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻՆ

Վիեննայից տեղեկութիւններ են ըստացուած Բերլինում, թէ բոլոր կաբինետներն ընդունել են այն սկզբունքը, որ իւրաքանչիւր նոր յարուցուած խնդիր բոլոր պետութեանց ընդհանուր քննութեան և վճռաբաութեան առարկայ պիտի գառնայ։ Կ. Պօլսի բոլոր դեսպաններին այդ իմաստով հրահանգներ են ուղարկուած։ Սէօր Ֆ. Կերբին, որ Թիւրքաց քաղաքականութեան զեկավարների հետ ունեցած յարաբերութիւնների մէջ աւելի ջերմութիւն էր արտայայտում, քան իւր ընկերները, այսուհետև բոլոր պետութիւնների կողմից մշակուած այդ սկզբունքին պիտի համակերպի։

Լէոնդօնից հաղորդում են, թէ Բրիտանական դեսպանին տուած հրահանգները չափազանց մեղմ բնաւորութիւն ունին։ Դեսպանի ամենագլխաւոր ջանքն այն պիտի լինի, որ պետութեանց միաբանութիւնը պահպանուի։

—

ՆՈՐ ԵՌԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

«Berliner Tageblatt» լրագրի Վիեննայի թղթակցի հաղորդածին նայելով Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ կատարեալ համաձայնութիւն է կայացել Հայաստանի բարենորոգութեանց մասին։ Այս ad hoc կազմուած մասնաւոր եռապետական հզօր դաշնակցութիւնը յոյս է տածում, որ իրերի վիճակը Բալքանեան թերակղզում կարելի կը լինի կանոնաւորել և եւրոպական խաղաղութիւնը ոչ մի կերպով չի վտանգուիլ։ «Շատ կարելի է, շարունակում է նոյն լրագիրը, որ հասարակական կարծիքն անդորրացնելու դիտմամբ նոր եռապետական համաձայնութեան մասին Արևելքում և պաշտօնապէս հրատարակուի։

—

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀԱՆԱՆԱՒԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

«Standard» լրագիրը քննելով երկրորդ պահականաւերի Բոսֆոր ուղարկելու խնդիրը, ասում է, թէ այդ միջոցը մի քանի կողմից նշանակութիւն ունի։ Նախ՝ պէտք է սուլթանին համոզէ, թէ պետութիւնները կատարեալ լրջութեամբ են պահանջում Հայաստանի համար անհրաժեշտ ռէֆորմների գործադրութիւնը և թէ այդ նպատակին նրանք կատարեալ համերաշխութեամբ են ձգտում։ Երկրորդ՝ պահականաւերի ներկայութիւնը նոյն իսկ ապահովութիւն է սուլթանի համար, եթէ պետութեանց պահանջներին գոհացնելու մտքով նրա արած փորձերը մահմեդական ժողովրդի մոլեռանդութիւնը գրգռեն։ Երրորդ՝ պետութիւնները ցանկանում են հայկական կոմիտեներին հասկացնել, թէ Եւրոպան հայկական խնդիրը լուծելիս պէտք է աչքի առաջ ունենայ միջազգային շահերը և ոչ թէ հայ հայրենասէրների ձգտումները։

—

ԻՏԱԼԻԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՈՒՄ

Հեռ. «Ռուս. Գործակ.»
Հռոմ, 16 Նոյեմբերի.

Քննելով արտաքին քաղաքականութիւնը՝ Գրիսպին ասաց, թէ վեց պետութիւնները ներկայումս համաձայնել են միասին գործել՝ յօգուտ խաղաղութեան և քաղաքակրթութեան։ Ցատկապէս Արևելքի մասին խօսելով, արտաքին գործոց նախարարն ասաց, թէ վեց պետութիւններն ամեն կերպ աշխատում են Դրան հետ ի միասին միջոցներ մշակել՝ կարգը վերականգնելու համար։ Այդ համաձայնութիւնը պէտք է ապահովէ խաղաղութեան պահպանութիւնը։ Դուռը սխալում է, եթէ կարծում է, թէ խնդիրը կարող է դիպլոմատիք քննութիւններով լուծուել. նա կը սխալուի, եթէ սահմանափակի պահականաւերի գործունէութիւնը, որոնք պետութեանց խաղաղ շահերին են ծառայում։

—

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մեր թղթակից պ. Պօսֆորի «Սուլթանի շրջապատողները» յօդուածներից ընթերցողն անշուշտ մի որոշ գաղափար կազմեց այն կարգերի մասին, որոնք տիրապետող են հանդիսանում սուլթանի արքունիքում։ Հասարակական ցեղերն այնտեղ նըստած՝ զեկավարում են պետութեան գործերը։ Որքան էլ խորհուրդներ ու ծրագիրներ կազմուին, վերջին բոպէում գործին բովանդակութիւն ու ուղղութիւն այդ մարդիկն են տալիս։ Մեծ պետութեանց ներկայացուցիչները գիտեն այդ, ճանաչում են այդ մարդկանցը և՝ դէպքը գալիս՝ յայտնում են իրենց դժգոհութիւնը։ Այսպէս «Berliner Tageblatt» լրագրի թղթակիցը Կ. Պօլսից գրում է.

«Սուլթանի դժգոհութեանն արժանի համար, եթէ պետութեանց պահանջներին գոհացնելու մտքով նրա արած փորձերը մահմեդական ժողովրդի մոլեռանդութիւնը գրգռեն։ Երրորդ՝ պետութիւնները ցանկանում են հայկական կոմիտեներին հասկացնել, թէ Եւրոպան հայկական խնդիրը լուծելիս պէտք է աչքի առաջ ունենայ միջազգային շահերը և ոչ թէ հայ հայրենասէրների ձգտումները։

—

ԵՌԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մեր թղթակից պ. Պօսֆորի «Սուլթանի շրջապատողները» յօդուածներից ընթերցողն անշուշտ մի որոշ գաղափար կազմեց այն կարգերի մասին, որոնք տիրապետող են հանդիսանում սուլթանի արքունիքում։ Հասարակական ցեղերն այնտեղ նըստած՝ զեկավարում են պետութեան գործերը։ Որքան էլ խորհուրդներ ու ծրագիրներ կազմուին, վերջին բոպէում գործին բովանդակութիւն ու ուղղութիւն այդ մարդիկն են տալիս։ Մեծ պետութեանց ներկայացուցիչները գիտեն այդ, ճանաչում են այդ մարդկանցը և՝ դէպքը գալիս՝ յայտնում են իրենց դժգոհութիւնը։ Այսպէս «Berliner Tageblatt» լրագրի թղթակիցը Կ. Պօլսից գրում է.

«Սուլթանի դժգոհութեանն արժանի համար, եթէ պետութեանց պահանջներին գոհացնելու մտքով նրա արած փորձերը մահմեդական ժողովրդի մոլեռանդութիւնը գրգռեն։ Երրորդ՝ պետութիւնները ցանկանում են հայկական կոմիտեներին հասկացնել, թէ Եւրոպան հայկական խնդիրը լուծելիս պէտք է աչքի առաջ ունենայ միջազգային շահերը և ոչ թէ հայ հայրենասէրների ձգտումները։

Դիպլոմատներից մէկն սկզբում նրան «աւանակ» անուանեց, յետոյ՝ «աւազակ»։ Երկու տարի սրանից առաջ նա լրտես էր. Ռաշիդ-փաշայի մօտից յափշտակեց նրա գրամարկղը, որի միջի սիրային նամակները քաղաքական վաւերագրերի տեղ ընդունեց»...

Եթէ ուզենանք իմանալ, թէ ինչ կը լինի մի երկրի դրութիւն, որի կառավարութեան զեկը de facto այդպիսի բախտախնդիր անձանց ձեռքին է գտնուում, ապա բաւական է միայն Թիւրքիայի պատկերը տեսնել։

„Politische Correspondenz“ լրագրի թղթակիցը Կ. Պօլսից գրում է.

«Պալատական շրջաններում լրջօրէն խօսում է, թէ կարելի է, որ Քիշէկչի-Սայիդ-փաշան մեծ եպարքոսութեան կոչուի։ Թէ որքան ճշմարիտ են այդ լուրերը, առ այժմ դժուար է քննել, մանաւանդ որ Ռիֆատ-փաշան մասամբ կարողացաւ ասիական նահանգները խաղաղացնելու գործում շատ-քիչ մի բան անել։

Նոյնպէս խօսում է թէ պետութիւնները Ռուսիայի հետ միասին մտադիր են առաջարկել հայոց պատրիարքը Իզմիրլեանին, որ ըստ կարելոյն շուտով ճնշէ հայկական կոմիտէների ամեն մի յեղափոխական ագիտացիա։ Ինչպէս լսում է, ռուսաց կառավարութեան ձեռքին ապացոյցներ կան, թէ հայկական շարժումը յեղափոխական բնաւորութիւն ունի։

—

ԴԱՒԱՌՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Դաւառների դրութիւնը դրաւում է շարունակ դիպլոմատիքական շրջանների անձկալի ուշադրութիւնը, և կասկած կայ, որ չափազանց դժուար պիտի լինի երկրին խաղաղութիւնը հաստատել։ Գոլսի Սամանթա թաղում երկու յեղափոխական յայտագրեր կպցուած լինելով, անցեալ երեկոյ յուզում տեղի ունեցաւ հայերի զօրաւոր լոյսից, որ այդտեղ չէ թափանցում...

Բայց ասեցի որ տրամադիր չեմ նկարագրելու։ Քիչ մնաց որ մոռանայի ասածս և յափշտակուէի...Սակայն եթէ շարունակեմ էլ՝ մի՞թէ նկարագրութիւն կը լինի իմ տակաւ թոթովանքը այն վրսեմ բնութեան հրաշալիքների, որոնց ականատես էի միայն կառքով անցած միջոցիս։—Ո՛չ, և հաղար անգամ ոչ։ Ուրեմն շարունակենք մեր խօսքը։

II

Նկարագրելու նոյնպիսի տրամադրութիւնից էլ, ինչպէս վերև ասեցի, շատ պակաս ցանկութիւն ունիմ որ և է բան խօսելու Թէրքի Նահանգի վարչական կենտրոն՝ հարթատարած Վլադիկավկազ քաղաքի մասին, մանաւանդ որ ճանապարհորդութիւնից հոգնած՝ երեկոյեան ժամին մտնելով այդտեղ, միւս օրը՝ առաւօտեան դուրս գնացինք շարունակելու մեր ճանապարհը արդէն Ռոստով-Վլադիկավկազի երկաթուղիով։

Միակ բանը որ այդ փառուած քաղաքում առաջին նուազ մարդուս ոչ միայն աչքը այլ և քիթն ու բերանն է ընկնում (առաւելապէս մեծաքիթ - բերանբացներին), այդ Վլադիկավկազի այն լայն փողոցների անտանելի փոշին է, որի մասին մի փոքր վերև յիշեցի և որ անձրևային օրերին անանց ցեխի է փոխարկվում։

Այդ քաղաքի քառասուն ու վեց հաղար բազմացեղ ու բազմալեզու բնակիչները՝ ծախսելով տարեկան հարիւր վաթսուն հաղար ռուբլուց էլ աւելի ի-

ները անտանելի փոշու մէջով ծածկուած, իրանց անմաքրութեամբ շատ աւելի գերազանցում են Կովկասի մայրաքաղաքի թոզոտ ու կեղտոտ փողոցներից։

Թիֆլիզից Վլադիկավկազ ժամանելս պատմում եմ այստեղ ոչ թէ ինձ համար, որ ինչ է իմաց անեմ, որպէս սովորութիւն ունին ոմանք, թէ Աստուծոյ ողորմութեամբ այս ինչ տեղից «սաղսալամաթ» այն ինչ տեղ հասայ, այլ ուզում եմ ստուգել, թէ մեր լրագրներում տպուող յիշեալ տեղեկատու-յայտարարութիւնը արչափ ճիշտ է։

Ուրեմն այդ տեղեկատուի ստուգութեան կամ ճշտութեան մասին կասկած չպիտի ունենայ ընթերցողը՝ հարկաւ եթէ ինձ հաւատում է։ Միայն որպէս զի դա չշփոթուի և մէկի տեղ վեց, եօթը բան չկարծէ՝ պիտի գիտենայ անպատճառ, որ եթէ հայ թերթերը և կամ մեր այլ և այլ հրատարակութիւնները՝ իրանց անհամաձայն ու հակառակ սովորութեան համեմատ, այդ տեսակ պարզ յայտարարութեան համար անգամ միաձուութիւն չպահպանելով՝ զանազան բառեր, տարբեր անուններ են գործ դնում, այնու ամենայնիւ Վրաց զինուորական և պատերազմական - Վրաստանի ճանապարհ, Ռազմական-վրաց և Վրաստանի-ռազմական, Ռազմավիրական, Վիրառազմական, Վիրառազմագիտական և չգիտեմ թէ էլ ինչ «զանրումարական»՝ բոլորն էլ վերաբերում են միմիայն Թիֆլիզից Վլադիկավկազ տանող ճանապարհին և միայն այդ ուղին են «յորջորջում» իրանց բազմաբան ու լեղուագար (թէ՞ լեզուացաւ) ասացուածներով, և ոչ թէ ուրիշ՝ այլ և այլ ճանապարհներ...

Ոչ թէ աւելորդ եմ համարում, այլ տրամադիր չեմ այժմ նկարագրելու այստեղ Կովկասի վիթխարի և ձիւնապատ լեռնաշղթայի սարերի միջով ու վրայով ճարտարօրէն և մեծ հմտութեամբ կառուցուած այդ հարթ խճուղին։ Մի կառընթաց, լայն ճանապարհ, որ ապառաժուտ ձորերում ու քարալից հովիտներում վրվրածուլ հոսող Արագվա և մանաւանդ Թերէք լեռնային աղմկալից գետերի և անդնդահեղձ ու կարկաչահոս բիւրաւոր առուների ու ջրվէժների աջ ու ձախ կողմն անցնելով, շատ ու շատ հեռու տեղերից և օտար աշխարհներից անգամ, առաւելապէս հիւսիսից և արևմուտքից, բազմաթիւ այցելու-ուղեորներ է միշտ գրաւել և տակաւին գրաւում դէպի իւր հաղուագիւտ տեսարանը. ուղեորներ, որոնց աքանչացնում է այդ ճանապարհը թէ իւր լեռնային բնութեան հրաշալի ու միանգամայն նըկարչական, բանաստեղծական վայրերով և թէ իւր երկարաձիգ դիրքի ճարտարաշէն կառուցմամբ՝ անդնդախոր ձորերի և ահեղաձեսիլ վիհերի միջով ու եզերով, ուղղահայեաց և գրեթէ սրածայր ժայռերի տակով ու վրայով, կանաչագեղ և գոյնզգոյն գալարով պատած, բարձրարերձ լեռների կողքով ու գառիվայրով և թանձր ամպերով յաճախ ծածկուող մշտասառոյց, հսկայական կատարների մօտով ու տակովներով...

Ցունիս ամսի վերջն էր, ասեցի, որ դուրս գնացինք Թիֆլիզից։ Եւ այդ, հէնց այդ տաք ժամանակն է, որ աւելի ևս աքանչելի և ասես կախարդական է դարձնում այդ եզական ճանապարհը իրան շրջապատող բովանդակ բնութեամբ։ Բաւական է որ մարդ անցնի այդ ժամանակ մի քանի տասնեակ վերստ և այցելէ այդ ճանապարհի մանաւանդ միջին տարածութեան վրայ եղած հինգ-վեց իջևան տեղերը՝ էլ չեմ ասում շրջակայ բարձրադիր գիւղերն ու լեռներից կարծես կախ ընկած «աուլները», որ ներկայ գտնուի տարուայ չորս եղանակների շուտափոյթ փոփոխութեանը՝ ճիշտ այնպէս շուտ, ինչպէս որ իջևաններում փոփոխում են սուրհանդակ կառքի հուժկու երիվարները։ Դարուն ու ամառը, աշունն ու ձմեռը անմիջապէս յաջորդում են իրարու այդպիսի մի կարճ տարածութեան վրայ դեռ օրուայ քանուչորս ժամը չբոլորած։ Ամառային տապ ու տօթին փոխարինում է գարանային դիւրալի զովութիւնը, աշնանային թացութիւնը տեղի է տալիս ձմեռային կազդուրիչ ցրտին և այլն. և այս բոլորը, ինչպէս ասեցի, մէկ օրուայ վաղանցուկ շրջանը չանցած ընթացքում։

Բուսականութիւնն էլ ասես հետեւում է օդի այդպիսի շուտափոյթ փոփոխութեանը և իւր տաք ու բարեխառն կլիմաների տաս տուրքը հետզհետէ այն ստիճանի նուազմանն է հասցնում, որ էլ ցորեն չտալով, հաղիւ գարի ու վարսակէ շնորհում, որոնցից վեր մնում են մշտադալար խոտը ոչխարաց հօտի համար և ապա մամուռն ու յետոյ սառնամանիքը...

Այո, աքանչելի ու միանգամայն կախարդական է Կովկաս լեռնային երկրի հրաշալի բնութիւնը իւր բազմազան երեւոյթներով և գերահրաշ, ահեղ ու վիթխարի տեսարաններով, որով մարդս՝ ինչպէս որ լայնատարած ու անմահման ծովի վրայ, այստեղ էլ իւր փոքրկութիւնն ու ոչնչութիւնն է զգում՝ տեսնելով յաւիտենական զօրութեան անհուն շնորհքներից մէկը։

Այո, ասում եմ, հրաշալի ու միանգամայն վսեմական է այդ երկրի բազմակերպ ու հարուստ բնութիւնը, որ իւր ժողովրդի առասպելածին երևակայութեանն էլ անչափ սնունդ տալով հանդերձ, վաղուց ի վեր առիթ էր տալել նշանաւոր պատմիչներին, մեծանուն հեղինակներին և հանճարեղ բանաստեղծներին ևս սրատաքուս աւիւնով և առանձին իմն պատկառանքով պատմելու, նկարագրելու և նուագելու դրան։ Այդ կողմն են Կաղբէգ և Էլբրուս վեհատեսիլ, սառուցեալ բարձունքը, վերամբարձ լեռներին շղթայած և յափշտակիչ անգղի սրկատուցով կեղեքուող և մասմաս լափուող առասպելական Պրոմէթէոսը։

Այդ ճանապարհի վրայ են հռչակաւոր Թամար թագուհու, վերանորոգիչ Դաւիթ արքայի և վրաց անուանի գահակալներից մնացած հոյակապ եկեղեցիների, ամրակառոյց մենաստանների և հասատիմն ամրոցների թէ տակաւին կայուն և թէ անկեալ աւերակները։ Այդտեղ է պատմական և աւանդական անցքերով հռչակուած Դարեալի նշանաւոր կիրճը, ուր ի սկզբանէ անտի բուն գրերին աղջամղջի թագաւորութեան դիւական ժառանգները՝ փախուստ տալով ամենայն բոլոր թիկնապահները արքունիքումն են ապրում։ Նրանց պաշտօնը կատարում է Իզզէթ-բէյը, որ առեւտրական դատարանի նախկին նախագահն է։ Դրա մասին դիպլոմատիքական շրջաններում ոչինչ լաւ բան չեն խօսում։ Դեսպանները մինչև անգամ հրաժարուեցին ընդունել նրա այն ժամանակ, երբ նա եկել էր սուլթանի յանձնարարութեամբ։ Դիպլոմատներից մէկն սկզբում նրան «աւանակ» անուանեց, յետոյ՝ «աւազակ»։ Երկու տարի սրանից առաջ նա լրտես էր. Ռաշիդ-փաշայի մօտից յափշտակեց նրա գրամարկղը, որի միջի սիրային նամակները քաղաքական վաւերագրերի տեղ ընդունեց»...

Եթէ ուզենանք իմանալ, թէ ինչ կը լինի մի երկրի դրութիւն, որի կառավարութեան զեկը de facto այդպիսի բախտախնդիր անձանց ձեռքին է գտնուում, ապա բաւական է միայն Թիւրքիայի պատկերը տեսնել։

„Politische Correspondenz“ լրագրի թղթակիցը Կ. Պօլսից գրում է.

«Պալատական շրջաններում լրջօրէն խօսում է, թէ կարելի է, որ Քիշէկչի-Սայիդ-փաշան մեծ եպարքոսութեան կոչուի։ Թէ որքան ճշմարիտ են այդ լուրերը, առ այժմ դժուար է քննել, մանաւանդ որ Ռիֆատ-փաշան մասամբ կարողացաւ ասիական նահանգները խաղաղացնելու գործում շատ-քիչ մի բան անել։

Նոյնպէս խօսում է թէ պետութիւնները Ռուսիայի հետ միասին մտադիր են առաջարկել հայոց պատրիարքը Իզմիրլեանին, որ ըստ կարելոյն շուտով ճնշէ հայկական կոմիտէների ամեն մի յեղափոխական ագիտացիա։ Ինչպէս լսում է, ռուսաց կառավարութեան ձեռքին ապացոյցներ կան, թէ հայկական շարժումը յեղափոխական բնաւորութիւն ունի։

—

ԴԱՒԱՌՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Դաւառների դրութիւնը դրաւում է շարունակ դիպլոմատիքական շրջանների անձկալի ուշադրութիւնը, և կասկած կայ, որ չափազանց դժուար պիտի լինի երկրին խաղաղութիւնը հաստատել։ Գոլսի Սամանթա թաղում երկու յեղափոխական յայտագրեր կպցուած լինելով, անցեալ երեկոյ յուզում տեղի ունեցաւ հայե-

րի մէջ. խանութները վաղ փակուեցան։ Այդ յայտագրերից մէկը՝ հայերէն է գրուած. հրաւիրում էր հայերին զինուել, որովհետև պիտի ջարդուին։ Երկրորդը թուրքերէն էր գրուած, յայտնում էր, թէ առաջին նշանին պէտք է սպաննել հայերին։ Պրն. Հէրպէրթ զիշերը տեղեկանալով գործին. անդր. դեսպանի առաջին թարգման պրն. Պոլրին զրկեց անմիջապէս ոստիկանական դիտողութիւններ ընելու Դրանը, պատասխանատու ընելով կառավարութիւնը, պատահելի ոեէ խռովութեան համար։ Ըստ այնմ կառավարութիւնը ձեռք առաւ պէտք եղած միջոցները, արգելելու համար ոեէ չարութիւն և երեսն հանելու համար յայտագրերի հեղինակներին։

Պոլսում Ռէյտէրի թղթակիցը այսօր մի տեսակցութիւն ունեցաւ արտաքին գործերի նոր նախարար Ռէֆֆիք փաշայի հետ, որ յայտարարեց, թէ գաւառներից վերջերս ստացուած տեղեկութիւնները հանդարտեցնող բնութիւն ունին, և թէ ամեն տեղ՝ ուր տաճկական բանակը երևում է, կարգը վերահաստատւում է։ Խաղաղութիւնը հաստատւում է Երզրումի և Առանայի վիլայէթներում, և թէ այս երկրորդ գաւառի իշխանութիւններն սկսած են խաղաղեցնել Բաեասի գաւառակի ժողովուրդը, ուր նոր չփոթութիւնը էին եկած։ Ցոյս յայտնելով որ կառավարութեան ձեռք առած միջոցներով խաղաղութիւնը շուտով կը վերահաստատուի Անատոլիայում, աւելացրեց նաև՝ թէ բարենորոգմանց գործադրութեան յանձնաժողովը աշխատում յառաջ է տանում իր գործը. և շուտով պիտի պատրաստ ցուցակն այն պաշտօնեաների, որոնք պէտք է օգնական նշանակուին կուսակալների, փոխ-կուսակալների, կառավարիչների և դատաւորների։ Այդ որոշումները շուտով պէտք է հրատարակուին։

— —

ԳՈՐԾԸ ԿԻՍԱՏ ՉԻ ՄՆԱԼ

„Temps“ լրագիրը, քննելով իրերի վիճակն արևելքում, ասում է. «Մինչև որ ասիական Տաճկաստանի նահանգներում կարգը չվերականգնուի, միշտ ծանր բարդութիւններ հնարաւոր կը լինին։ Պետութիւնները, որոնք իրար հետ դաշն են կապել և մի շարք գործեր են կատարել այն տպաւորութեան ներքոյ, որ Փորթ-Անթայում սկսում է ներքին պատերազմ, չեն կարող յետ քաշուել առաջ քան չվերականգնուի հասարակաց խաղաղութիւնը և չըպատժուին նորա խանգարման գլխաւոր հեղինակները»։ Լրագիրը կարծում է, որ անգլիական դեսպան Կերբրի Կ. Պոլիս վերադառնալուց յետոյ, պետութեանց ներկայացուցիչներն ամբողջովին այնտեղ գտնուելով «կարող են նոր եռանդով ձեռնամուխ լինել ընդհանուր խաղաղութեան և ռէֆորմների գործերին»։ Ֆրանսիական լրագրի կարծիքով ներկայումս արքունիքների մէջ լինում է կարծիքների փոխանակութիւն դեսպաններին տրուելիք ապագայ հրահանգների մասին։

—

ԲԱՐՈՆ ԲԼԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ.—ԶԷԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Հռովմից անգլիական լրագրները հաղորդում են. — Արտաքին գործոց նախարար բարոն Բլանն իր ընկերներին յայտնել է, թէ Պետերբուրգի Իտալական դեսպանից տեղեկութիւն է ստացել, որ Ռուսիան կարիք է համարում Հայաստանի ռէֆորմներն իրագործելու համար Թիւրքիային անհրաժեշտ ժամանակամիջոցը տալ։ Ընդհանրապէս բարոն Բլանի զեկուցումը այն տպաւորութիւնն է թողել, թէ իրերի դրութիւնը մի փոքր բարւոքուել է։ Բարոն Բլանը նոյնպէս թագաւորին հաւաստիացրել է, թէ Արևելքում կատարուող դէպքերը Եւրոպայի խաղաղութեան վրայ վտանգաւոր ազդեցութիւն չեն ունենալ, որովհետև պետութիւնների միջև կատարեալ համերաշխութիւն է տիրում։

Կ. Պոլսի Իտալական նոր դեսպանը հեռագրել է բարոն Բլանին, թէ մեծ վեզիր Ռիֆատ փաշայի խօսքով աւելի քան երեք ամիս է հարկաւոր՝ Զէյթունի ապստամբութիւնը ճնշելու համար։ Մեծ վեզիրն առանձնապէս պնդում է, թէ անհրաժեշտ է Իտալիայի և միւս պետութեանց համերաշխ գործունէութիւնը, որպէս զի կարելի լինի արգելել, որ յեղափոխական շարժումը Բալքանեան միւս տէրութեանց մէջ ևս չտարածուի։

—

ԻՐԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆՆ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

«Post» լրագրի մէջ հետևեալ տեղեկութիւնն է տպուած.

«Ինչպէս երևում է, իրերի դրութիւնն Արևելքում թէպէտ և դանդաղ, այնու ամենայնիւ բարւոքւում է։ Դժուար է՝ ի հարկէ՝ որոշել, թէ այդ գործում ինչ մասն պիտի տրուի ժողովրդի խելքի գալուն, կառավարիչների բարի կամքին և վերջապէս մօտացող ձմռանը։ Յամենայն դէպս ձեռք է բերւում մի թանկագին ժամանակ, որ կարող է գործերն իրանց բնական կերպարանքին վերածել, եթէ միայն կարողանան նրանից պատշաճապէս օգտուել։ Նոյն ուղղութեամբ ներգործում է և պետութեանց սերտ միաբանութիւնը, որ ոչինչով չի խախտւում, ըստ որում այդ միաբանութիւնը պէտք է թիւրք քաղաքական գործիչներին աւելի և աւելի ներշնչէ այն համոզումը, թէ այս անգամ իրանք գործ ունին ամբողջ Եւրոպայի հաւաքական կամքի հետ և թէ նրան ուշ չդարձնելը ոչ օրի այնպէս չի վնասիլ, ինչպէս Թիւրքիային»։

—

Կ. ՊՕԼՍՈՒՄ

Թէ Կ. Պոլսում մարդերն ինչպէս վերաբերուած են, թէ բնակիչները որքան անապահով են զգում իրենց, երևում է Կ. Պոլսի այն թղթակցութիւնից, որ տպուած է «Times»-ի մէջ։ Մայրաքաղաքում բնակող հայերի վրայ, գրում է թղթակիցը, դեռ սարսափ է տիրում։ Սկսուտարից և շրջակայքից բազմաթիւ հայ ընտանիքներ հայկական թաղերն են փոխադրուում։ Հարուստ հայերը մեծ մասով իրենց տունը չեն գիշերում, այլ Պերայի հիւրանոցներում։

—

ՀԱՃԸՆԻ ԴԷՊՔԵՐԸ

Ռէյտ. գործ. նոյ. 23-ին հեռագրում է «Daily-News»-ին, «Մարդուանում Ամերիկեան միսիոնարներն և իրենց բնակարանները կառավարութեան կողմից ուշադրութեամբ պաշտպանւում են։ Երէկ սուլթանը հաղորդեց պ. Թրըլին՝ Միացեալ-Նահանգների դեսպանին, թէ վերջին երկու օրերում ոչ մի ընդհարում չէ պատահել Անատոլիայում։

Նոր լուր է ստացուած, թէ Հաճընի կառավարիչը ուզել է քաղաքը վերածել պատերազմավայրի։ Հաճընում գտնուելով երեք ամերիկեան միսիոնարներ, պ. Թրըլը յայտնեց Դեան, թէ ինքը կառավարչի գլուխ պիտի պահանջէ և պիտի աշխատի ստանալ, եթէ այդ մարդկանց մէկի դէմ դիմադրութիւն պատահի։ Այդ պարոններն այսօր դեռ ողջառողջ են։

Նոյեմբ. 24-ին.

Ասիական գաւառներում դրութիւնը մի քիչ աւելի խաղաղ կերևի, ոչ մի ընդհարում չէ հաղորդուած։

Հաճընի կառավարիչը, որի համար հաղորդուած էր՝ թէ ուզում է քաղաքը ջարդի տալ, պաշտօնանկ է եղել։ Այդ տնօրէնութիւնը արդիւնք է պ. Թրըլի վճռական պահանջումներին։

—

ՊԱՀՊՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ և ԻՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

Արտասահմանեան մի քանի լրագիրներ հաղորդում են, թէ պետութիւնները յայտնել են օսմանեան կառավարութեանը, որ ռէֆորմները հանդստութեամբ մտցնելու համար վեց ամիս ժամանակ են տալիս։

Հարկաւ՝ վեց ամիսը Թիւրքիայի համար անագին բան է։ Ասած է՝ պարտքի համար ժամանակ ձեռք բերել, մինչդեռ է՝ թէ պարտքից ազատուել։ Իսկ այդ ասացուածի իմաստը ոչ որ այնպէս չի ուսումնասիրել, ինչպէս Թիւրքիան։

Փարիզի լրագրներին Կ. Պոլսից գրում են.

«Հայաստանում կարծես փոփոխութիւն է կատարւում դէպի լաւը։

Էրզրումից հաղորդում են, թէ այնտեղի ականաւոր հայերը Շաքիր-փաշայի և Էրզրումի ընդհանուր նահանգապետի մօտ են գնացել ուցցակցութիւն յայտնել այն անկարգութիւնների առթիւ, որ առաջ բերին հայ յեղափոխականները։ Միևնոյն ժամանակ շնորհակալութիւն յայտնեցին այն միջոցների համար, որ նրանք ձեռք են առել՝ վիրաւորներին ու խեղճերին խնամելու և եկեղեցիքն ու դպրոցները պաշտպանելու։

Միւս կողմից Ուրուզի ասորի եպիսկոպոսները՝ այդ քաղաքի մի քանի նշանաւոր բնակիչների հետ ի միասին մեծ վեզիրին հետևեալ հեռագիրն են ուղարկել։

«Ուրուզում տեղի ունեցած անցքերի պատճառով տեղական վարչութիւնները հետևելով մեր օգոստափառ Ինքնակալի ցուցմունքներին՝ այնպիսի խմաստուն միջոցներ ձեռք առան, որ այժմ մեր դրութիւնն ապահով է երևում։ Որպէս մեր, նոյնպէս և հարևան քաղաքների նշանաւոր մահմեդականները շարունակում են մեզ հետ կատարեալ բարեկամական յարաբերութիւններ պահպանել»։

Ուրիշ է ռուսայնորերին պատկերը, որ նկարագրում է մի ֆրանսիական լրագրի թղթակիցը։

«Հալէպի շրջակայքում 20 գիւղ է այրուած, բնակիչները մորթուած են։ Սարաշում թիւրք զօրավարի և կառավարչի աչքի առջև քրիստոնեաների կոտորած է տեղի ունեցել. նրանք չեն միջամտել։ Երեք հարիւր հոգի սպանուած են։ Կաթոլիկներին պաշտպանելու համար ոչ մի պահապան չի դրուել՝ հակառակ վալիի խոստումներին։ Քիւրդերը Սասրիք են գնալու՝ քրիստոնեաներին կոտորելու համար»։

Մի ուրիշ տեղումը կարդում ենք.

«Լսում է, թէ մօտերս սուլթանը Ղզլայի սաստիկ յուզման մէջ սպանել է իւր առաջին թիկնապահ Հաջի Ալի բէյին և իւր հին զօրապետներից մէկին, որ եկել էին նրանից թոշակ խնդրելու։ Զօրապետը ցանկանում էր իւր գրպանից խնդիրը հանել, բայց սուլթանը կարծեց թէ նա դէնք է հանում, ուստի և ռէվոլվերով հարուածեց ու ծերունուն տեղն ու տեղը թողեց»։

«Երէկ բանտարկուեցան 14 հայեր։

«Փոքր-Ասիայից մէկը միւսից սխալ լուրեր են գալիս։ Շատ տեղ թիւրքերը շարունակում են նեղել հայերին։ Առևտուրը գրեթէ կանգ է առել. ժողովուրդը սաստիկ կարիք է քաշում» («Նով. Աբաղ.»)։

Մեր հեռագրական գործակալութիւնն էլ միւս կողմից է ամեն ինչ քողարկում։ Երկու-երեք շաբաթ առաջ յայտնեց, թէ զէյթունցիների ապստամբութիւնը ճնշուած է, հանդիսաւոր հաշտութիւն է կայացել։ Սակայն յայտնւում է, որ Զէյթունցիր ամենեին միտք չունին արժան կերպով հաշտուելու։

Ահա ինչ է հաղորդում «Standard» լրագիրը։

«Երեսուն հազար ապստամբ հայեր ջարդեցին թիւրքաց զօրքը, որ քսան հազարից էր կազմուած. շատերին գերի վերցրին, գրաւեցին թիւրքերի թնդանօթներն ու զէնքերը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի 21-ին, երեքշաբթի երեկոյեան Պետերբուրգ ուղևորուեցաւ երկրիս պ. կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շիրմանովը ուղեկցութեամբ Նորին բարձրը գերազանցութեան դիւանի տնօրէն իսկ. պետ. խորհրդ. Միցկեվիչի, և թիկնապահներ՝ կոմս Էսսէն-Սոէմբոկ-Ֆերմօրի և պ. Թամամշեանի։

* * *

ՀՐԱՄԱՆ ԿՈՎԿԱՍԻ Գ. ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ

Նոյեմբերի 21-ին 1895թուի, Թիֆլիզ։ Ուղևորուելով ծառայութեան գործերով Պետերբուրգ, առաջարկում եմ իմ օգնական ինֆանտերիայի գիներալ կոմս Ցատիշչէվին իմ պարտաւորութիւններն ստանձնել։

Իմ դիւանի տնօրէն իսկական պետական խորհրդական Միցկեվիչի, ծառայութեան գործերով Պետերբուրգ ուղևորուելու պատճառով, առաջարկում եմ գնդապետ Սօլովիովին, իսկական պետական խորհրդական Միցկեվիչի բացակայութեան միջոցին, կատարել իմ դիւանի տնօրէնի պաշտօնը, այլ և ներկայ գտնուել իմ խորհրդի նիստերին։

Ստորագրեց՝ Կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետեւ։

* * *

Նոյեմբերի 21-ին ծառայութեան գործերով ուղևորուեցաւ Պետերբուրգ Կովկասի զօրաց ընդհանուր շտաբի պետ գեներալ-լէյտենանտ Պերլիկը։

* * *

Տերութեան հաստատութեանը ներկայացրած է մի նոր ընկերութեան կանոնագրութիւն որ ինքնատակին է կանանց բժշկական ինստիտուտի պահպանութիւնը և նորա ուսանողուհիներին օժանդակութիւն մատակարարելը։ Ընկերութիւնը կազմում են երկու սեռին պատկանող անդամներ։ Ընկերութեանը, կանոնագրութեան ծրագրի համեմատ, թոյլատրվում է հրապարակական դասախօսութիւններ, կոնցերտներ և այլն կազմակերպել, ճաշարաններ և այլն հաստատել, որոնք պէտք է ծառայեն կանանց բժշկական ինստիտուտի և նորա ուսանողուհիների շահերին և ընկերութեան ճիւղեր բանալ Ռուսիայի զանազան քաղաքներում, որոնք պէտք է գեկավարուին ընկերութեան խորհուրդի առած հրահանգներով։ Ընկերութեան գործերը վարում են ընդհանուր ժողովը և խորհուրդը։ Խորհուրդը բաղկացած է 12 անդամներից, որոնք երեք տարի ժամանակով են ընտրվում։ Խորհրդի անդամներից երկուսը, նախարարութեան ընտրութեամբ կանանց բժշկական ինստիտուտի հոգաբարձական խորհրդի անդամ են նշանակվում ձայնի իրաւունքով։

* * *

Երկրիս պ. կառավարչապետը թոյլատրել է, «Կարս» լրագրի ասելով, Կարս նահանգի օժանդակիչ զանձարանից փոխատուութիւն տալ Արդահանի շրջանի Պեսօբան, Գէօրգիս-Ուբան և Փափլօ գիւղերի բնակիչներին, որոնք մեծապէս վնասուել են այս տարուայ յունիսին կարկուտից։ Առաջին երկու գիւղը ստանում են ծուխին 40 ռուբլի հաշուով—2,280 ռուբլի փոխատուութիւն, իսկ վերջինս, ծուխին 25 ռուբլի հաշուով—775 ռուբլի։ Գիւղացիք վճարելու են 6% և առաջին երկու գիւղը պէտք է շինուցանեն իրենց պարտքը հինգ տարուայ ընթացքում, իսկ վերջինը—3 տարուայ՝ առաջիկայ 1896-ից սկսեալ։

* * *

ՂՈՒԲԱ, 18 նոյեմբերի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Առաջիկայ 1896 թուից Կովկասի գաւառական քաղաքներում մտցուելիք քաղաքային վարչութեան մասին բաւականին յօդուածներ և նամակներ գրուեցան լրագրների մէջ. շատ քաղաքներից նոյն իսկ շտապեցին «հաւանական թեկնածուների» անուններ տպագրութեան տալ Թիֆլիզում հրատարակուող լրագրների մէջ և այդպիսով հոգ պատրաստել այդ թեկնածուների ընտրութիւնները յաջողցնելու ապագայում տեղի ունենալիք ընտրութիւնների ժամանակ, սակայն առանց փոքր ի շատէ վաղօրօք լուրջ քննադատութեան ենթարկելու առաջարկուած թեկնածուների մեծաւոր ընդունակութիւնները այդ պաշտօնի համար, օգտուելով և գրաւուելով միայն նրանց հասարակութեան մէջ բռնած դիրքից—տոհմական ծագումից, նիւթական կարողութիւնից, ինչ-ինչ միջոցներով հռչակած անունից, յատկութիւններ, որոնք, նայելով քաղաքագլխութեան պաշտօնի արժանաւորութեան տեսակէտից՝ ամենաթոյլ քննադատութեան անգամ չեն կարող դիմանալ։ Այս խորհրդածութիւններն առաջ եկան ինձանում, երբ Թիֆլիզում հրատարակուող մի թերթում կարդացի Զամախու քաղաքագլխի պաշտօնի համար ի նկատի ունեցած երկու «հաւանական թեկնածուների» անունները—Ալէքսանդր-բէգ Լալայանց և Թադէոս-բէգ Եգանեանց։ Այնպիսի մի հասարակական պատասխանատու պաշտօնի համար, որպիսին քաղաքագլխի պաշտօնն է, պէտք է կոչուի այնպիսի անձնաւորութիւն, որ օժտուած լինի մտաւորական մի անտառով անցնող խղճուղու վրայ, բայց այնպիսի մի սաստիկ փոշի է բարձրացնում, մանաւանդ եթէ մի փոքր էլ քամի կայ, որ Թիֆլիզից դէպի սողանալուն արուարձան տանող թոզոտ ճանապարհը «փաս»...

Անտանելի փոշին թէ կարճ ճանապարհների վրայ և թէ չորս բուժավայրերի շատ փողոցներում, մեծ հրապարակների և հասարակաց մի փոքր յետ ընկած այլ տեղերի անմաքրութիւնն ու չՀրելը, դեռ մի կողմն եմ թողնում միւս անյարմարութիւնները, այն տեսակ սովորական երևոյթ է եղել այդ կողմերում, որ կարծես թէ «հանքային ջրերի» վարչութիւնը՝ գործնական բժշկութեամբ պարապող հարիւրաւոր մեծապատիւ զօրաւորների ու մեծարգոյ պրոֆէսորների հետ միասին, ջրաբուժական անհրաժեշտ միջոց են համարում այն հազարաւոր եկուորների համար, որոնք ցանկանում են գալ այդտեղ և օգտուել հանքային ջրերի բուժիչ զօրութեամբ։

Այդպէս ուրեմն երկաթուղու կայարանը հինգ վերստ հեռու է, ասացի, Ժէլէզնովոդսկից։ Եւ երբ մի ձեռնհաս պարոնից հարց ու փորձ էի անում, թէ ինչու երկաթուղու գիծը հէնց կառուցանելու ժամանակ մինչև իսկ Ժէլէզնովոդսկ աւանը չեն հասցրել, նա պատասխանեց ինձ, թէ դուք սովոր էք Անդրկովկասի և ուրիշ համանման երկիրների երկաթուղիներն ունենալ աչքի առջև, որ շատ և շատ դժուարանց տեղերով են անց ու դարձ անում, մինչդեռ մեր կողմերում, այսինքն ձեզանից հիւսիսային երկիրներում մեծ մասամբ դանց են առնում կամ՝ երկաթուղու ճիւղը, որպէս արդէն յիշեցի, ուստի և այդ պատճառով անուանել են այդ տեղը «Հանքային ջրերի կայարան»։

Առաջին անգամ եկող ճանապարհորդը՝ մի ակնարկ ձգելով այդ կայարանի արտաքին տեսքին ու եւրոպական ճաշակով չակուած սեղանատան սրճարանին, որի սպասաւորները ոև պոչզգեստները հագած, սպիտակ փողպատներով և նոյն գոյնի ձեռնոցներով մաքուր «զպլտուած»՝ ամենայն պատրաստութեամբ ծառայում են ուղևորներին և ծախսած ուտելիքի կամ խմիչքի համար «պապիս գինը» վճարել տալիս, պիտի երևակայէ, եթէ տարաբախտաբար սըրտանում անց ու դարձ անող կովկասցի խայտառղէտ ամբոխը չխանգարէ, պիտի երևակայէ, ասում եմ, թէ կատակ բան չէ հա, Եւրոպայի մի որ և է նշանաւոր բուժավայրի նախադուռն է մտել։

Աւելացնենք սորա վրայ երկաթուղու այդ ճիւղի բաւականին սիրուն, կոկիկ վագոնների՝ ամառային երթևեկութեանը յարմարեցրած, գեղեցիկ սարգն ու կաբզը, նկատելի մաքրութիւնը և Ռոստովի կողմից այդտեղ ժամանող ճանապարհորդներից սմանց օտարահնչիւն արտասանութեամբ ֆրանսերէն լեզուով կարարելը՝ դէպ ու անդէպ donc déjà անհամաձայն բացականչութիւնների կրկնութեամբ, և դուք չէք սխալուիլ, եթէ առ ժամ մի ընկղմուիք «եւրոպական հաճելի երևակայութեան» մէջ։

Ասում եմ առ ժամ մի, վասն զի այդ «եւրոպական դիւրալի երևակայութիւնը» այժմ երկաթուղու ճիւղը, որպէս արդէն ասացի, ուստի և այդ պատճառով անուանել են այդ տեղը «Հանքային ջրերի կայարան»։

Առաջին անգամ եկող ճանապարհորդը՝ մի ակնարկ ձգելով այդ կայարանի արտաքին տեսքին ու եւրոպական ճաշակով չակուած սեղանատան սրճարանին, որի սպասաւորները ոև պոչզգեստները հագած, սպիտակ փողպատներով և նոյն գոյնի ձեռնոցներով մաքուր «զպլտուած»՝ ամենայն պատրաստութեամբ ծառայում են ուղևորներին և ծախսած ուտելիքի կամ խմիչքի համար «պապիս գինը» վճարել տալիս, պիտի երևակայէ, եթէ տարաբախտաբար սըրտանում անց ու դարձ անող կովկասցի խայտառղէտ ամբոխը չխանգարէ, պիտի երևակայէ, ասում եմ, թէ կատակ բան չէ հա, Եւրոպայի մի որ և է նշանաւոր բուժավայրի նախադուռն է մտել։

Աւելացնենք սորա վրայ երկաթուղու այդ ճիւղի բաւականին սիրուն, կոկիկ վագոնների՝ ամառային երթևեկութեանը յարմարեցրած, գեղեցիկ սարգն ու կաբզը, նկատելի մաքրութիւնը և Ռոստովի կողմից այդտեղ ժամանող ճանապարհորդներից սմանց օտարահնչիւն արտասանութեամբ ֆրանսերէն լեզուով կարարելը՝ դէպ ու անդէպ donc déjà անհամաձայն բացականչութիւնների կրկնութեամբ, և դուք չէք սխալուիլ, եթէ առ ժամ մի ընկղմուիք «եւրոպական հաճելի երևակայութեան» մէջ։

Ասում եմ առ ժամ մի, վասն զի այդ «եւրոպական դիւրալի երևակայութիւնը» շատ կարճ է տևում. Այո, ընդամենը երեք քառորդ ժամկամ քսան վերստ տարածութիւն՝ այսինքն մինչև որ հասնինք Ժէլէզնովոդսկի կայարանը, և որա փոքրիկ, բայց սիրուն սճով շինուածքի քարաշէն սանդուխով բարձրանալով՝ մը անենք արեւելեան գունից յարմարաւոր սրահը և դուրս գնանք արևմտեան կողմը։

Այդտեղ արդէն. դու ես իմ պարոնը, «եւրոպական հաճելի երևակայութեան» բոլոր ախորժանքը օդն է ցնդվում հիմնովին և մենք կատարելապէս զգում ենք թէ աշխարհիս որ մասին է պատկանում այն երիրը, ուր գտնուելու բախտն ունինք. . .

Իսկոյն ամենքը անկարգ կերպով թափվում են փողոցի կառքերի առմամբ։ Ներ ծախողի վրայ և յարաշտաւ՝ մէկը միւսից առաջ կուրելով, շուտով իրանց տեղն են բռնում կառքերում, որ չլինի թէ առանց կառքի մնալով, ստիպուած լինին ոտքով անցնելու հինգ վերստ հեռաւորութիւն՝ այսինքն երկաթուղու կայարանից մինչև նոյն իսկ Ժէլէզնովոդսկ աւանը։ Թէև ազատ շրջող կառքեր էլ կան այդտեղ, բայց ճանապարհորդներին դիւրութիւն տալու համար և կառապանների կամայական վարմունքին չենթարկուելու պատճառով՝ փողոցի կառքերի մեծ մասը երկաթուղու վարչութիւնն ունի վարձած որոշ սակագնով։

Ահա բազմաեռակ ու ամեն ձեի կառքերի երկար շարքն սկսում է շարժուել թէև սիրուն կաղնիների հետ խառն կաղամախի ու բարդենի ժառերի գեղեցիկ մի անտառով անցնող խղճուղու վրայ, բայց այնպիսի մի սաստիկ փոշի է բարձրացնում, մանաւանդ եթէ մի փոքր էլ քամի կայ, որ Թիֆլիզից դէպի սողանալուն արուարձան տանող թոզոտ ճանապարհը «փաս»...

Անտանելի փոշին թէ կարճ ճանապարհների վրայ և թէ չորս բուժավայրերի շատ փողոցներում, մեծ հրապարակների և հասարակաց մի փոքր յետ ընկած այլ տեղերի անմաքրութիւնն ու չՀրելը, դեռ մի կողմն եմ թողնում միւս անյարմարութիւնները, այն տեսակ սովորական երևոյթ է եղել այդ կողմերում, որ կարծես թէ «հանքային ջրերի» վարչութիւնը՝ գործնական բժշկութեամբ պարապող հարիւրաւոր մեծապատիւ զօրաւորների ու մեծարգոյ պրոֆէսորների հետ միասին, ջրաբուժական անհրաժեշտ միջոց են համարում այն հազարաւոր եկուորների համար, որոնք ցանկանում են գալ այդտեղ և օգտուել հանքային ջրերի բուժիչ զօրութեամբ։

Այդպէս ուրեմն երկաթուղու կայարանը հինգ վերստ հեռու է, ասացի, Ժէլէզնովոդսկից։ Եւ երբ մի ձեռնհաս պարոնից հարց ու փորձ էի անում, թէ ինչու երկաթուղու գիծը հէնց կառուցանելու ժամանակ մինչև իսկ Ժէլէզնովոդսկ աւանը չեն հասցրել, նա պատասխանեց ինձ, թէ դուք սովոր էք Անդրկովկասի և ուրիշ համանման երկիրների երկաթուղիներն ունենալ աչքի առջև, որ շատ և շատ դժուարանց տեղերով են անց ու դարձ անում, մինչդեռ մեր կողմերում, այսինքն ձեզանից հիւսիսային երկիրներում մեծ մասամբ դանց են առնում կա-

բազմակողմանի ընդունակութիւններով, վարչական ձիրքերով, բացի սոցանից, այդ պաշտօնն ստանձնելուց առաջ, արդէն գրաւած լինի հասարակութեան մէջ մի որոշ դիրք իւր անձի սեպհական արժանաւորութիւններով, անկախ բարեկամական կապերից, տոհմական ծագումից, նիւթական կարողութիւնից և այլն. որին հասարակութիւնը յարգած, պատուած լինի լոկ այն պատճառով, որ նրա սեպհական անձնաւորութեան սահմանից այն կողմը չէ անցնում այդ յարգանքն ու պատիւը դէպի ինքը ձգող այժի ազդիւրը, այլապէս ընարուածի հեղինակութիւնն ու ազդեցութիւնը երկրատաւ չի լինել ընտրող հասարակութեան վրայ։ Այդպիսի մի անձնաւորութիւն Զամախում մենք ճանաչում ենք թեկնածու պ. Եգանեանցին, եթէ միայն համաձայնի ընդունել նա այդ ծանր պաշտօնը իւր ծերութեան օրերում։

Տողերիս գրողինքիչ չէ պատահել տեսնել պ. Եգանեանցի առանձնասենեակում ամեն տեսակ և հասակի անձնաւորութիւններ, որոնք ոչ միայն դատաստանական, այլև հասարակական, ընտանեկան, ընկերավարական և ամենատեսակ գժուար լուծելի հարցերով դիմել են պ. Եգանեանցի խորհրդներին և ցանկալի վճռները ստացել այլ և նա է եղել նախկին վիճակաւոր առաջնորդների, դպրոցների հոգաբարձութեանց և այլ հասարակական գործիչների գլխաւոր խորհրդակիցն ու խորհրդատուն. մի խօսքով նա Զամախու հասարակութեան ընդհանուր հայրն ու դատաւորն է, որին դիմում է թէ թուրքը, թէ հայը իւր խելքից ու մրաքից բարձր գործերի համար։ Բացի այս ընդհանուր բազմագիմի արժանաւոր յատկութիւններից՝ ունի նաև մի եզակի արժանաւորութիւն, որ հազիւ մի ուրիշն ունենայ ամբողջ Զամախում.—նա կատարելապէս տիրապետում է հայ, ռուս և թիւրք լեզուներին, ինչպէս և այդ լեզուներով ազատ գրում է և կարդում. կարծում ենք այս հանգամանքն էլ պակաս նշանակութիւն չունի քաղաքացիի պաշտօնի համար։ Վերջացնելով մեր խօսքը պ. Եգանեանի մասին՝ սորան ենք համարում ամենայարմար և արժանաւոր թեկնածուն Զամախու ազգայ քաղաքացիի պաշտօնի համար։ Սակայն արի տես, որ Զամախեցին մի այսպիսի կարևոր հարց վճռելու ժամանակ ևս առաջնորդվում է «թայֆայական», «խաթը-ի-չուն» սկզբունքներով... Պ. Եգանեանցից յետոյ յարմարագոյն այդ պաշտօնի համար մենք համարում ենք Զամախու գաւառական բժիշկ պ. Գ. Յովհաննիսեանցին, որ, եթէ չենք սխալվում, թեկնածու է համարվում և Ալէքսանդրապոլի համար։

Թաւիշաւան։

* * *

ՈՒՓԼԻՍՑԻԽԷՅԻ (Գօրուայ գաւառ) գրում են «Տիֆլ. Լիստ.» լրագրին. «Տեղական հայ հասարակութիւնը, աչքի առաջ ունենալով, որ հայոց եկեղեցին հիմնաւոր վերանորոգութեան է կարօտ, մտադրութիւն ունի Թիֆլիզի թեմական առաջնորդին խնդրել մի մասնաժողով նշանակելու այս եկեղեցոյ վերաշինութեան համար»։

* * *

«Վլադիմիր» շիգենաւի խորտակման գործի քննութիւնը յետաձգուած է դեկտեմբերից մինչ յունվար ամիսը։

* * *

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐԲՈՐԴ ՔԱՌԱՆՈՒԱԳ ԵՐԵԿՈՅԹՆԵՐԸ

—

Նոյեմբերի 4-ին երաժշտական ուսումնարանի դահլիճում կայացաւ երկրորդ քառանուագ երեկոյթը պ. Մատկովսկու մասնակցութեամբ։ Մի հետաքրքիր նորութիւն կար այդ երեկոյթին, այն է՝ Արենսկու Trio (եռանուագ) D-mall op. 32, որ վերին ասպիճանի գրաւիչ ու գեղարվեստական հեղինակութիւն է, մանաւանդ երկրորդ մասը, Scherzo-ն։ Այդ եռանուագի վերջին մասում, Finale, ամփոփուած են առաջին երեք մասերի եղանակները, որ մի շատ գեղեցիկ նորութիւն է։ Արենսկու այդ կոմպոզիցիան մեծ յաջողութիւն ունի թէ Պետերբուրգում և թէ Մոսկվայում։ Պ. Մատկովսկին շատ յաջողութեամբ կատարեց իւր մասը դաշնամուրի վրայ։

Մշտական քառանուագը այդ երեկոյթին նուագեց յայտնի D-dur № 8 քառանուագը և Շուբերտի կվինտէտը (հինգ երաժշտական գործիքների համար մի երգ) C-dur, op. 163։ Երկրորդ վիոլոնչէլի մասը կատարեց ուսումնարանի տաղանդաւոր աշակերտ Թորոխովոյը։ Համեմատաբար միւս երեկոյթների հետ, երաժիշտները թոյլ կատարեցին այդ հինգինակութիւնները։ Բայց մենք չենք կարող մեղադրել մեր յարգելի երաժիշտներին, որովհետև ամենամեծ նուագողները միշտ տրամադրուած չեն լինում անպայման լաւ ածելու։

—

Երրորդ քառանուագ երեկոյթը, որ կայացաւ նոյեմբերի 18-ին, շատ յաջող պէտք է համարել։ Մշտական քառանուագը կատարեց Մօցարտի կվարտետը շատ գեղեցիկ կերպով։ Այնուհետև Տ. Ռնտիլովա-Սարաջևան պ. Սարաջևի հետ կատարեց Բեթհովէնի սոնատան դաշնամուրի և վիոլոնչէլի համար գրուած։ Դա մի այնպիսի սքանչելի, անմահ հեղինակութիւն է և Սարաջև ամուսիններն այնպիսի կատարելագործութեամբ, խորին երաժշտական հասկացողութեամբ ու ճաշակով նուագեցին, որ հասարակութիւնը բոլորովին յափշտակուեց։ Ինչքան գեղեցիկ է նուագում տ. Ռնտիլովան։

Որքան ուելի առիթ ենք ունենում յարելի տիկնոջ նուագը լսելու, այնքան ուելի զարմանում ենք, թէ ինչպէս յառաջադիմում է նա, չնայելով, որ Թիֆլիզում քիչ առիթ կայ ընտիր երաժշտութիւն լսելու և այդպիսով ուելի ևս զարգացնելու իւր ճաշակը։

Վերջում մշտական քառանուագը ուսումնարանի մի քանի յառաջադէմ աշակերտների մասնակցութեամբ նուագեց Մենդելսոնի օկտետը (ութ երաժշտական գործիքների համար յօրինուած նուագ), մի վերին ասպիճանի գեղեցիկ նուագ, որ լսելիս ակամայ յիշում ես փիլիսոփայ Պետրոնիի երաժշտութեան բացատրութիւնը. «Երաժշտութիւնը ծով է, մենք կանգնած ենք մի ափում և տեսնում ենք հեռուստ տարածութիւնը, բայց և այնպէս միւս ափը անկարող ենք որոշել»։

Ինչպէս երևաց այդ հրաշալի գլուխգործքի կատարելուց, երաժիշտները բոլորովին պատրաստ չէին։ Ամենից շատ նշմարելի էր այդ վերջին մասում, որտեղ համարեա բոլոր գործիքները աններդաշնակ էին ածում, չնայելով պ. Վասիլևի (առաջին ջութակ) եռանդուն ղեկավարութեանը։

—

ՐԵԳԵՐ ՔՈՅՐԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Ամսոյս 19-ին, ներկայ եղանք մի վերին ասպիճանի հետաքրքրական նուագահանդիսի։ Հոս քոյր,— մինը Բոգալիա դաշնամուր նուագող, միւսը Սօֆիա՝ ջութակ ածող, երրորդը՝ Լօլա՝ ալտ նուագող և չորրորդը Էմիլիա՝ վիոլոնչէլ ածող,—ներկայացան հասարակութեանը։ Բոլորն էլ մատաղահաս, գրաւիչ ու տաղանդաւոր, նոքա արդէն ապաւորութիւն են գործում հէնց միայն բեմ դուրս գալով։

Նոքա չափազանց վարժ և անսամբլի կողմից միանգամայն գովելի կերպով են նուագում քառանուագները։ Բայց մանաւանդ հետաքրքրական էր լսել օրիորդներին իրանց մանուագիտական գործիքների վրայ նուագելիս։ Օր. Սօֆիան շատ կատարելագործուած կերպով ածեց ջութակի վրայ մի քանի դժուար նուագներ. սակայն զգացմունք արտայայտելու կողմից նա պատրաստ չէ իրրև երաժշտուհի։

Ապա միւս քոյրը՝ օր. Էմիլիան խոշոր տաղանդ է երևում. նա նուագեց solo վիոլոնչէլի վրայ վերին ասպիճանի դժուար հեղինակութիւններ։ Նրա մատերն այնպիսի արագութեամբ և թեթևութեամբ սահում են վիոլոնչէլի լարերի վրայ և նրա ածելու եղանակն այնքան նշանաւոր է, որ անկասկած մեծ երաժշտական ապագայ է սպասում տաղանդաւոր օրիորդին։

Առհասարակ մեծ յաջողութիւն ունեցան օրիորդները. հասարակութիւնն անվերջ ծափահարութիւններով վարձատրում էր նոցա իր ստացած բաւականութեան համար։ Ժողովարանի դահլիճը ծայրէ ի ծայր լի էր։

Սարգ. Բ.

* * *

Ներկայումս բարիտոն պ. Բէզլար Ամիրջանեանցը ատգին յաջողութեամբ կօնցերտներ է տալիս Սարատովում։ Գոնեա տեղական «Սարատովսկի Դնեվնիկը» խօսքիր չէ գտնում մեր բարեհոնի ձայնը, երաժշտական հմտութիւնը և նուրբ ըմբռնողութիւնը գովաբանելու. իսկ Սարատովի հասարակութիւնն անդադար «bis»-ներ է գոչում և անվերջ ծափահարութիւններով վարձատրում Բ. Ամիրջանին։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * * «Նովոյէ Վրէմիա» լրագիրը աւելի ընտիր գործի արժանի եռանդով շարունակում է մի այնպիսի արհեստով պարապել, որ ոչ միայն անվայել է Ռուսիայի հասարակական կարծիքը զեկավարելու յատկութիւն ունեցող մեծ թերթի, այլ և ուղղակի նախատեսնուած է քրէական պատժագրքում։ Շատ ժամանակ չկայ, որ պ. Կասպերովը բռնեց այդ թերթի զղղութիւնները, ապացուցանելով, որ նորա մէջ լոյս տեսնող յօդուածներից շատերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ արտագրութիւններ պաշտօնական զեկուցումներից, այժմ «Նովոստի» լրագիրը «Նովոյէ Վրէմիայի» աշխատակից պ. Գուրիեվի մի այլ ոխրագործութիւնն է մերկացնում, որ անշուշտ ռուս ֆինանսիստի առաջին յանցանքը չէ։ Լսեցէք, ընթերցող.

«Նովոյէ Վրէմիայի» նոյեմբերի 6 թ համարում զետեղուած է մի ֆէլիետոն՝ «Զարքը միջազգային անտեսութեան մէջ» վերնագրով և «Ա. Գուրիեվ» ստորագրութեամբ։ Խնդիրը հետաքրքրական է և թվում է, որ հեղինակն ինքնուրոյնաբար է մշակել իր նիւթը։ Սակայն... այդ ֆէլիետոնն իրօք ոչ այլ ինչ է, եթէ ոչ համարեա բառացի արտատպումն երեք շարադրութիւններից։ Այն ֆէլիետոնի իսկական հեղինակները՝ որ կրում է պ. Գուրիեվի ստորագրութիւնը, են՝ 1) պրոֆ. Եանժուլը (Основныя начала финансоваго хозяйства" հրատ. 1895 թ. եր. 436—438), 2. Ի. Անդրիէվը (Всемірная Колумбова выставка 1893 г. въ Чикаго. եր. 335 և հետևալ.) և գլխաւորապէս Ռիխարդ Յիմերմանը („Der Zucker im Welthandel" հրատ. 1895 թ.)։ Վերջին զրքոյկից պ. Գուրիեվը՝ բացի վերնագրից քաղել է իր ֆէլիետոնի նախագիծը, թատնշանները և այլն։ Դժբաղդաբար պ. Գուրիեվը նոյն ճշդութեամբ չէ արտագրել պ. Յիմերմանի գրքից, որքան իր հայրենակիցների երկերից։ Այդ պատճառով նորա ֆէլիետոնում կոպիտ սխալներ են պատահում, որոնց մէջ մաս և բաժին չունի գերմանական հեղինակը։ Օրինակ պ. Գուրիեվը չփոթել է ռուբլիները գուլդենների հետ, այնպէս որ շաբաթի՝ աշխարհիս արդիւնաբերութեան ընդհանուր գումարը 710 միլիոն գուլդէն չէ ցոյց տուած, այլ 700 միլիոն ռուբլի. Սպանիայի արդիւնաբերութիւնը տասնապատկուած է (եր. 36) և այլն և այլն»։

* * * «Ռուսկ. Վեդ.» լրագիրը խօսելով նորերումս վախճանուած Ալէքսանդր Դիմայի գրականական երկերի մասին, ի միջի այլոց վերագրում է նորան «Supplice d'une femme» («Մի կնոջ տանջանքը») գր. հեղինակութիւնը։ Դարձ ենք հաստատցնել ռուս լրագրի խմբագրութեան, որ հանգուցեալ Դիմայի մտքովն անգամ չէ անցել այդ գործը գրելու. «Supplice d'une femme» ը, որ ներկայացուած է եղել տակաւին 1879 թուին նաև Թիֆլիզի հայկական բեմի վրայ, պատկանում է դը-Ժիրարդէնի գրչին։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԲԱՐԹԵԼԷՄԻ ՍԷՆԹ-ԻԼԷՐ

(Մահացուցակ)

—

Այս օրերս Փարիզում վախճանուեցաւ 90 տարեկան հասակում յայտնի գիտնական և պետական գործիչ Բարթելէմի Սէնթ-Իլէրը։ Նա ծնաւ 1805 թ. իւր կրթութիւնն ուարտելուց յետոյ մտաւ ծառայութիւն արտաքին գործոց նախարարութիւնը և միևնոյն ժամանակ նշանաւոր եղաւ իբրև ազատամիտ հանճարաւոր հրապարակախօս։ 1833 թուականից նա թողեց հրապարակախօսի ասպարէզը և իբրև պետական գործունէութեան նուիրեց։ 1838 թ. պ. Բարթելէմի Սէնթ-Իլէրը նշանակուեցաւ College de France-ի ուսուցչապետ և 1839 թ. ճեմարանի անդամ։ 1848 թուականի փետրուարի յեղափոխութիւնից յետոյ նա ընտրուեցաւ և օրէնսդրական ժողովների անդամ, իսկ 1851 թուականին պետական հարուածի ժամանակ կալանաւորուեցաւ և բանտարկուեցաւ Մազասում։ Սրանից Բարթելէմի Սէնթ-Իլէրը հրաժարուեցաւ երդուելու Նապոլէօնին և ուսուցչապետութեան պաշտօնից զրկուեցաւ։ Երկրորդ կայսրութեան ժամանակ նա զբաղուած էր ինքնուրոյն գիտական երկասիրութիւններով սանսկրիտ և հին դասական մատենագրութեան մասին։ Նապոլէօնի կառավարութեան անկումից յետոյ Բարթելէմի Սէնթ-Իլէրն ընտրուեցաւ Բորդոյի ազգային ժողովի անդամ և այստեղ նպաստեց իւր բարեկամ Տիէրի հանրապետութեան նախագահ ընտրուելուն։ 1876 թ. նա ծերակոյտի անդամ ընտրուեցաւ ցմահ. իսկ 1880 թ. Ֆերդիի նախարարութեան ժամանակ արտաքին գործոց պաշտօն էր վարում։ Հանգուցեալ գիտնական երկերը վերաբերում են յոյն գրականութեան պատմութեան, սանսկրիտ լեզուին և հնդկական փիլիսոփայութեան. սոյնպէսիր են նորա հետազօտութիւնները արիստոտէլի տրամաբանութեան, Աղեքսանդրիայի դպրոցի, Վեդաների, Բուդդայի և Բուդդայականութեան, Ղուրանի մասին և այլն։ Բացի այս նորա գրչի արդիւնք են Արիստոտէլի և Հոմերոսի երկերի թարգմանութիւնները ռամանաւորով։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, նոյեմբ. 11.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Իմ քաղաքայութեան միջոցին պատահած են դէպքեր, զորս բնական տհաճութեամբ կը հաղորդեմ ձեզ, թէև հաւանական է, որ անոնց մեծ մասը բերած է ձեզ եւրոպական մամուլը։

Սուլթանին սենեկապահներէն հաճի Ալի-պէյ և Էմին-պէյ, որոնք պաշտօնակից եղած էին և առաջնոյն յաջորդ իսկ կարգուած է Իզզէթ-պէյ մը, այժմ նորից ստացան իրենց պաշտօնը։

Խրիմ հրատարակուող «Թէրճիման» անուն թերթարաց լրագիրը, որ սակայն այստեղ կը տպագրուի և կամուրջին վրայ ազատ վաճառելով ամեն տաճիկ կը կարդայ, այս օրերս սկսած է հայոց դէմ ատաստիկ յօդուածներ գրել։ Այդ $4^1/_2$ հայերը, կրսէ թերթը, կաշխատին սուլթանին թշնամանել և ինքնօրինութիւն կազմել Տաճկաստանի և Կովկասի Հայաստանը միացնելով, որոց մայրաքաղաքը կը լինի Թիֆլիզ։ Թերթը հեղինակը, իր այսքան յանդուգն և լպիրշ ենթադրութեամբ շատ մեղադրելի չէր լինիր, եթէ միամտութեամբ գրած լինէր, բայց ճիշդն այն է, որ որոշ չար նպատակ կընէ այդ արտառոց հրատարակութիւնը. իբր փոխարինութիւն օսմ. կառավարութենէն ստացած մեծ ուսիկին։ Գոնէ եթէ մէկ ամենախեղճ հայու հարցնէր, ստանալիք պատասխանն ապահովապէս սա պիտի լինէր, որ տաճկահայերը կը նախանձեն ռուսահայոց հանգիստ ու ազատ կեանքին, և կուզեն անոնց չափ բարեբաղդ ըլլալ իրենց երկրին մէջ։

Իսկ միւս կողմանէ, կառավարութիւնը տեսնելով, որ հայ թերթերը իրենք ոչինչ կը գրեն սոսկալի ճշմարտութեան դէմ, ինք գրած և գրված է անոնց յատուկ յօդուածներ, զորս հայ խմբագիրք ապշութեամբ կարդացած և մերժած են հրատարակել, նախազգաս համարելով դադարեցընել իրենց թերթերը։ Այսպէս «Արևելք» և «Ճէրիմէի Զարքիէ» և մինչև իսկ «Հայրենիք» չեն հրատարակուիր այլ ևս։

Բայց փառք Աստուծոյ, Պարտիզակցի Վահան վարդապետ Տէր-Մինասեան, շաբաթ օր հրատարակեց «Ցոյս» անունով մի շաբաթաթերթ և այսպէս ազգասիրաբար լցուց դադրած թերթերի պակասն։

Այս անոյշ վիճակին մէջ «Ցոյսը» յոյս կը տայ հայերուն, խորհուրդ ուղղանել թէ հասարակ և թէ անառատ լեռների կամ բլուրների միջով անգամ, որ սակայն այնքան էլ շատ չեն մեր հարթաւատար, տափարակ աշխարհում. և կար վերջապէս այդպիսի է կամքը պարոնայք ճարտարապետների, որոնք որ կողմը ուզեն՝ այն կողմն էլ կ'անեն մեռելի գլուխը։ Բայց որ այժմ բարձրադոյն հրամայուած է՝ ինչ պիտի անեն, —հարկաւ ստիպուած են մինչև իսկ ծէլէզիօվօդոկ հասցնել գիծը՝ նոր հանգամանքներից նորապէս օգուտելով ի հարկէ։...

III

Ծէլէզնօվօդոկ ասուած տեղը, որ Թէրքի Նահանգի կողմերի անառատ պատ մի ատան է, իւր վերակոչումն ընտացել է այն հանքային հարուստ ջրերի առատարուստ աղբիւրներից, որոնց երկաթախառն յատկութիւնը իւր բուժիչ զօրութեամբ յայտնի է եղել շատերին տակաւին դարուս սկզբից։

Բուժավայրս՝ որ մօտ երկու հազար սանտիմ բարձրութիւն ունի Սև ծովի մակերեսոյթից հաշուած, գտնվում է ընդարձակ մի ծառազարդ ձորում, որ ձգվում է արևելքից դէպի արևմուտք և կամ, եթէ կուզէք, ընդհակառակը։ Իսկ հարաւից և հիւսիսից պատած է Բէշ-Թաու և Երկաթաւոր կոչուած անտառային բարձրութիւններով։

Բնակարանները, ճաշարանները, լողարանների շէնքերը, աղբիւրները, այլ և այլ շինութիւնները՝ իրանց սուտերախիտ ծառատանով (parc), և մի խօսքով ամբողջ ատանը, որ վերոյիշեալ ձորի մօտ երկու վերստ տարածութիւն ունի բռնած, ըստ մեծի մասին երկաթաւերան գաւիթների կողմն են փռուած, մինչդեռ ձորի միւս կողմը գեղեցկապէս շարուսակուելով տարածվում է ընդարձակ անտառը, ուր տեղ տեղ երևում են նոյնպէս նորաշէն տներ և շէնքեր։ Սրանից նշանաւոր է երկրագործական և պետական կալուածների նախկին մինիստր Աստրովսկու անուն կրող լողարանների նորակառոյց շինութիւնը մաւրիտանական շքեղազարդ ոճով, որ 1893 թուին է աւարտած։ Այդ շինութիւնը այն միակ հաստատութիւնն է «Գովկասի հանքային ջրերի» շորս բուժավայրերում, որ համապատասխանում է ժամանակակից ջրաժուժական գիտութեան գրեթէ բոլոր պահանջներին։ Այո, այդ միակ հաստատութիւնն է, ասում եմ, որ իւր տեսակի մէջ եւրոպական լողարանների շինութեան կարգն ու տարքն ունի։ Բայց մէկ ծաղիկը, ինչպէս ասում են, գարուն չէ բերում...

Որչափ բնութիւնը իւր առատ ձիրքը պարգևելով թէ այդ և թէ միւս երեք բուժավայր տեղերին՝ առիթ է տուել մարդկանց վայելելու իւր կենսատու շնորհքի պտուղները, նոյնչափ՝ համարեա մի դար շարունակ, ծոյլ և ժլատ են գտնուել այդտեղ մարդիկ՝ իրանց արուեստով ու գիտութեամբ կարգաւորելու բնութեան պտուղների տուած արդիւնքն այնպէս, ինչպէս որ նախ և առաջ անհրաժեշտ հարկաւոր է։ Խօսքս ի հարկէ հիւսիսային Գովկասի կիսավայրենի ժողովրդների մասին չէ, այլ հասկանալի է, թէ ումն եմ ակնարկում։

Անկասկած Գովկասի հանքային ջրերը իրանց բազմատեսակ յատկութեամբ և հարաւութեամբ շատ նշանաւոր են, առատ են, որով մասնագէտ եւրոպացիներն անդամ հիացել են՝ ընդամենը վաթսուն վերստ տարածութեան վրայ այդքան հարուստ և օգտակար հանքային ջրեր տեսնելով, վայրերը գեղեցիկ են, ընտիրները շնորհալի է, որպէս առհասարակ Գովկաս երկրի շատ և շատ տեղերը, բայց այդ բոլորի հետ միասին թող տան այդտեղ բուժուողներին այն մի երկու գլխաւոր բանը, որ՝ ինչպէս ասեցի, նախ և առաջ անհրաժեշտ հարկաւոր է ոչ թէ մի որեէ բուժավայրում, այլ և ամեն մի կանոնաւոր տեղում, ուր մարդիկ են ապրում։ Թող տան յարմար բնակարան, մնուցիչ, թարմ կերակուր, քաղցրարարս—անուշ խմելու ջուր, պահպանեն մաքրութիւն առ հասարակ և կարևոր ուշադրութիւն դարձնեն առողջապահական տարրական և միւս էական յարմարութիւններին միայն։ Իսկ սրանից առաւելը կամ մնացածը թող իրանց «փէչքէշ» լինի։ Բայց զբաղխատաբար այդ անհրաժեշտ բաներն էլ գրեթէ չկան յիշեալ բուժավայրերում, որոնց թէ արտարձանների և թէ մասամբ իրանց մէջ գտնուած կողմերի թաղերի (սլոբոտկաներ) ոգոմելի ու անտանելի գրութեան մասին չարժէ իսկ խօսել։

Օրինակ այդ չորս բուժավայր տեղերը՝ թէև ունին արդէն նոր կառուցուած ջրմուղներ, որ խմելու բաւականին անուշ ջուր են մատակարարում, (բացի Էսէնթուկի ջրից, որ ոչ այնչափ առողջարար բաղադրութիւն ունի), սակայն առատ ջրի քանակութիւնն այնչափ չէ, որ անհրաժեշտ գործածութիւնից և մասամբ մի երկու տեղ ջրելուց զատ, բաւականանայ նոյնպէս փողոցների ու հրապարակների ջրելուն, որոնք ինչպէս վերև յիշուեցաւ, չոր ժամանակ սաստիկ փոշիով և անձրևային ու խոնաւ օրերին հատա ցեխով ու գրեթով են ծածկվում։

Իսկ Կիսլովոդսկում, որ յայտնի է իւր սիրուն, գեղատես դիրքով, լեռնային մեղմ ու կազդուրիչ, թէև երբեմն ոչ այնքան առողջարար օդով, և առաւելապէս իւր հռչակուած ածխաթթուային հանքագիւտ աղբիւրով, որին չիրբէկները «Նարզան» անունն են տուել, այսինքն քաջարի հերոսների խմիչք, ամենակարևորը թողած՝ այնպիսի բաներ են ձեռնարկում, որ էապէս ուելորդ շքեղութիւն (lixe) պէտք է համարել, եթէ չասեմ շռայլութիւն։

Այդտեղ, որ կլիմայական ամառանոց-բուժավայր է համարվում (климатическій курортъ), փոխանակ բոլոր փողոցները կարգին մաքուր պահելու և ըստ հարկին ամեն տեղ ջրելու և լուսաւորելու՝ մի երկու գլխաւոր փողոցներում և ծառաստանի մէջ էլէքտրական լուսաւորութիւն են մացրել, կիսախաւար և կեղտոտ թողնելով մնացած փողոցները, ինչպէս որ են միւս բուժավայրերում։ Ցեսոյ էժանագին բնակարաններ կառուցանելու փոխարէն (այժմ սկսել են կառուցանել) մի մեծ թատրոն և մի ընդարձակ «կուրզալ» (բուժասրահ) են շինում՝ իրանց բոլոր մեծածախ և ճոխ պարագաներով և այլն։ Ասում են, թէ այդ ամենը ձեռնարկել է Վլադիկովկազի երկաթուղու վարչութիւնը։ Զատաբ։ Բայց մեր ինչ գործն է, թէ ով է կառուցանում այդ բոլորը։ Ամեն մի առողջատաս անձն կը վկայէ և հաղար անգամ ուելի օգտակար կը լինէր, եթէ շատ անգամ կրկնուած մի քանի անհրաժեշտ կարեւոր յարմարութիւններին ձեռնարկելուց և ի վախճան հասնելուց զատ՝ չորացնել, մաքրել տային նոյնպէս թէ այդ Կիսլովոդսկ ատանի և թէ միւս բուժավայրերի մօտ կամ շրջականերում եղած խոնաւ ու ճահճոտ տեղերը։

Խոնաւ ու ճահճոտ տեղեր, որ բացի մոծակ, մժեղ և այլ միջատներ գոյացնելուց՝ յաճախ դող ու տենդ են մատակարարում ինչպէս այդ «կլիմայական բուժավայրի» (sic!), նմանապէս և միւս երեք բուժավայր տեղերի թէ ժամանակաւոր և թէ մնայուն բնակիչներին. էլ չեմ ասում մարմնով թոյլ և բուժուող էակներին, որոնք ինքն ըստ ինքեան արդէն տրամադիր են ուելի շուտ վարակուելու ամեն հիւանդութեամբ։ Այդ թաց ու ճահճոտ տեղերն են անշուշտ գլխաւոր պատճառը, որ Կիսլովոդսկում երեկոները և առաւելապէս գիշերը խոնաւութիւն զգալի է դառնում։

Դալիս ենք օրինակ ծէլէզնօվօդոկ՝ Ռուսաստանի այդ Գրանցկոյոգը, ինչպէս որ անուանում են դրան, և ոչ մի հիւրանոց չկայ, ուր կարողանանք մի գիշեր գոնէ անցնել և ապա՝ միւս օրը աջ ու ձախ նայելով կարգադրենք մեր գործը։ Բաւական չէ այս. վարձու առուղ բնակարաններում անդամ ոչ մի սենեակ չէք գտնիլ օրավարձով. պէտք է անպատճառ ամսով վարձէք, եթէ այն էլ գտաք, և իսկոյն վճարէք ամսականը։ Իսկ եթէ բան է՝ հետևալ օրը անպարմար և մինչև անգամ հակառողջական տեսնէք ձեր վարձած սենեակը և կամենաք ուրիշ տուն փոխադրուիլ, տուած փողից ոչինչ յետ չէք ստանալ։ Բայց և սենեակների գինն էլ բուժական շրջանի (սէզօն) բանուկ ժամանակ մէկը երեք է դառնում և դժուար թէ ամսական հարիւր կամ ութսուն ռուբլուց պակաս մի սենեակ ճարէք, որ այն էլ արժանի լինի իւր փոքր ի շատէ յարմարութեամբ մարդկային բնակարանի այդ անուան և ուր գտնէ երկու հոգի կարողանան անչփոթ տեղաւորուիլ»

Մեր ժողովրդական ասացուածը թէ «պատն ականջ ունի»՝ այդ կողմերում բոլորովին փոխվում է, որովհետև ոչ թէ միայն այդ տեղի պատերն ունին ականջ, այլ և առատաղը, յատակը. այնպէս որ կամայ ակամայ թէ հարևանդ է քեզ լսում, և թէ գուհարևանդ։ Պատուհաններից, ճեղքերից, բացուած տեղերից հօ էլ ցուրտ, քամի, թոզ, տրեի տաղ ու տաքութիւն, մոծակ, մժեղ ինչքան ասես։ Կարծես ամեն բան այդտեղ «թքով կպցրած» լինի։

Տան սպասաւորների ծառայութիւնն էլ՝ Աստուած ծառայութիւն համարէ։ Ցանտէրների մեծ մասը ծառաներին ու աղախիններին ձրի են վարձում, կամ աւելի ճիշտ ընդունում, այն յուսով որ կենդանները վճարեն նրանց ամսականը, և ստիպուած վճարում են էլ ի հարկէ։ Ուրեմն բնակարանի վարձին պէտք է աւելացնենք ծառաներին տալիք փողն էլ, որ աւելի «կլոր գումար մը» գոյանայ։

Ն. Ցարոյ

(Կը շարունակուի)

տալով խոնարհութեամբ դիմել օսմ. կառավարութեան, որ պարդեւ ամեն ինչ, և իզուր ոչ չառնել կեղծաւոր և անդօր Եւրոպայի դեսպաններ։

Թէ ինչպէս յանկարծ ծնաւ «Ցոյսը», երբ մի ոևէ հայ նոր թերթի հրատարակման համար չըսեմ անհարութիւն, այլ ահագին դժուարութիւն կայ, այդ գաղտնիքը պէտք է որոնել Վահան վարդապետի անցեալին մէջ։

Աստրիոյ դեսպան պ. Գալիչէ անցեալ կիրակի ունկնդրութեան հրաւիրուեցաւ պալատ սուլթանը երկար ժամանակ և տեսակցեցաւ անոր հետ, իր գաղափարները ստանալու համար։ Դեսպանին խոհեմ ու պատշաճ կարծիքները մեծ տպաւորութիւն ըրած են վեհապետին վրայ։

Խրիմի «Թերճիմանի» վերջին երկու թիւերը շատ հետաքրքրական հանգամանք ունին. այժմ ալ կը գրէ՝ հայերը մեծ կարողութիւններ ունին, Ցանկաստանի ամբողջ վաճառականութիւնը իրենց ձեռքն է և այլն, թերես զգալով իր նախորդ թուերու ամբարտաւան ստութիւններուն ծանր ազդեցութիւնը թեթեցընելու պէտքը։ Ահա մի criminel թերթ։

Պօսֆոր։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՂԷՇԻՑ մեզ գրում են հոկտ. 25 թուով.

«Հինգ օր առաջ զգացինք մեր կոտորածի նշանները։ Այդ բանի համար բոլոր վաճառատներ կողպելով դիմեցինք Առաջնորդական տեղապահ տ. Ցակոբոս վարդ. Զահպազեանին, որ քաղաքական ժողովոյ խորհրդակցութեամբ դիմէ կառավարութեան և նորա ուշադրութիւն խընդրէ այդ հանգամանքի վրայ, որ արիւնոտ գոյներով սկսեր էր կատարուիլ մեր շուրջը։ Կառավարութիւնը՝ կաշուց դուրս գալով, հաւաստիացրեց, որ ոչինչ չկայ և միւս կողմից խստիւ պատուիրեց, որ գործատներն ու վաճառատները բաց անեն և իւրաքանչիւր ոք ամենայն վստահութեամբ իւր զբաղմունքին հետեւի։ Հայերը հաւատալով Վալի փաշայի խոստման, (որ խոստումից շատ սպառնալիքներ լսեցին), սկսան միամտիւ և իրենց գործին հետեւիլ։ Մահմեդական ամբոխը, որին մեացած էին նաև մօտ 350 մօտակայքի զինեալ քիւրդերը, ամսոյ 13-ին, կէսօրից յետոյ, սկսան սոսկալի կոտորութեամբ յարձակուիլ քաղաքի ու շուկայի վրայ։ Թէ շուկայի և թէ փողոցների մէջ եղող հայերից և ոչ մէկը չկարողացաւ ազատուիլ։ Կոտորի ամբոխը շատ փողոցների ու թաղերի մէջ խորտակեց նաև բնակարանների գռները և այնտեղ ևս կոտորածներ արաւ։ Շուկան, վաճառատներ և բնակարաններ բոլորովին աւերի մատնուեցան։ Ընդհանուր կոտորելոց թիւը կը հաշուի 1500։ Բողոքական միսիոնարութիւնը հազիւ հազ կարողացաւ վտանգից ազատուել։ Միտրը ձօրքը անմիջապէս հեռագրով դիմեց Մուշ անգլիական հիւպատոս պ. Համպսոնին և նրա ուշադրութիւն խընդրեց այդ վայրենի հանգամանքի վրայ։ Ցայտնի և երեւելի վաճառականներին ազատուած է Պարալեան Սերոբ ազան։ Աւելի ահարկու վընասներ ու կոտորածներ տեղի ունեցած են Բաղէշու շրջակայքը գրտնուող գիւղերի և գաւառների մէջ։ Խուլթիկ գիւղը, որ բաղկացած է մօտաւորապէս 500 զուտ հայ տներից, բոլորովին աւերակ է եղեր։ Խիզան, Ցափիկ, Գիւլզատէ գաւառները, սոսկալի կոտորածի ու աւարառութեանց մատնուեր են։ Խարզան գաւառը, որ Սղերտի իշխանութեան կը հպատակի, և 22 հայաբնակ գիւղերից է բաղկացած, միմիայն զերծ է մնացեր մէկ գիւղ։ Նա էլ մահմեդականութիւն ընդունելով է կարողացեր ազատուել։ Բաղէշոյ ընդարձակ կուսակալութիւնը բոլորովին աւերակ տեսք ունի։ Քաղաքի մէջ տեղի ունեցած կոտորածների մարմինների կէսը կատարելութիւնը իւր հատուկ խորամանկութեամբ թաղել տուաւ իրենց (տաճկաց) գերեզմանոցի մէջ, իսկ մնացածները մօտ 5 օր մնացին փողոցների և թաղերի մէջ թափթփված։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ.—Երէկ և այսօր Իզմիրքեօսկում խորհուրդ կայացաւ պահականաւերի համար ֆիրման հրատարակելու վերաբերմամբ։ Սուլթանի յանձնարարութեամբ Սայիդ-փաշան, որ խորհուրդներին ներկայ էր, Ցեֆիկ-փաշայի հետ բոլոր դեսպանների մօտ գնացին, որոնց և հաւատացրին, թէ Կ. Պոլսում կատարեալ անդորրութիւն է և նախագուշութեան անհրաժեշտ միջոցները կը գործադրուին։ Այդ տեղ խնդիր է եղել երկրորդ պահականաւերից հրաժարուելու։ Դեսպանները, որ նորից խորհրդակցութեան պիտի ժողովուին, որոշ պատասխան չտուին։

—Կ. Պոլսում ծովային ցոյց կազմելուն դէմ ձայն է բարձրացրել „Kölnische Zeitung“ լրագիրը. «Օտար երկրացիների դրութիւնն այժմ վտանգաւոր չէ, ասում է լրագիրը. սակայն ծովային ցոյցը կարող է ընդհանուր կոտորած առաջացնել. և այն ժամանակ նաւատորմիղի զօրքերը, եթէ ափն անգամ իջնեն, անդօր կը լինին եւրոպացիներին պաշտպանել ամբոխի մոլեռանդութիւնից»։ Լրագիրը խորհուրդ է տալիս ծովային ցոյցերի փոխարէն մի քանի նաւահանգիստներ գրաւել և զօրքերը Փորթ-Սայիդ հանել։

ԻՏԱԼԻԱ.—Արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ Իմբրիանին հարցանդում ուղղելով արտաքին գործոց նախարարին, ասաց.—Իտալիան չպիտի ծառայի այնպիսի շահերի, որոնք Թիւրքաց ժառանգութեանն են վերաբերում։ Արտաքին գործոց նախարարը ճառախօսի խօսքը կարդալով, յայտնեց.—Իտալիան ոչ օրի ծառայ չէ և չի կարող լինել։

«ԱՐԶԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Նոյեմբերի 23-ից.

Կ. ՊՕԼՍԻՑ. («Կօրբ. Բիւրօ»).—Էրզրում հասու Փորթ-Սայիդի նահանգների յանձնաժողովը. նոյն տեսակ յանձնաժողով գնաց նաև Խարբերդ։

ԼՕՆԴՕՆ.—Հռոմից „Daily News“-ի ստացած տեղեկութեանց նայելով իտալական բոլոր զինուորականներում եռանդուն գործունէութիւն է նկատվում, որպէս զի բոլոր Իտալիայի ծովային ոյժերը պատրաստ լինին ինչ էլ որ պատահելու լինի։ „Riemonte“ զրահաւորին հրամայուած է լրցալ դէպի Լեվանտի ջրերը։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՈՒԱՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԵՐՍԵՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻՍԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վենէրական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ականջի և նեարդային հ.

ԿԻՆ-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕԿԻՆԱ—ՁՀԵՐԲԻՆԻՆԱ—11—12 ժ. կանանց հիւանդութեան հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէղի և սեռական օրգանների նեղքին և մորթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէղի, խիտ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակի, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի գեղերից գործադրվում են նաև դանդաղ տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կինոքմանները և երեխաները

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասնաձեռ կին և մասաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում զիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժ.։ հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 ր.։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԶՈՐԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

Բաթումից դուրս է գնում՝

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով՝ Նովօրոսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստապօլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում՝

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով։

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Դ. ԹԵՐԵԹԻԼԻ
ՄԱՐԴԱՒԻԾ
ՊՕՔՄԱՆ
(Պատկերազարդ)
Փոխադրեց
ԴԱՒԻԹ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑ
Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում։
ԳԻՆՆ Է 20 ԿՊԵԿ։
(4—1)

Երդուեալ հաւատար. օգնական
ՍԻՄԷՈՆ ՕՐԴՈՒԽԱՆԵԱՆՑԸ
ընակվում է Սօլօլակում, Ֆրէյլինսկայա, № 6։ (3—2)

Երդուեալ հաւատարմ.
ՎԱՐԴԱՆ ԵԼԻԱԶԱՐԵԱՆԸ
ընակվում է Սօլօլակում, Կոնսուլսկի փողոցում, Բուղդանեանի տանը։
(5—4)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՕՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 2,500,000 ռ. ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի դէպս աշխատանքի անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. գրամագլխի, որ պիտի ետ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք միջոցներ են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում արուող գրամագլուխն ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկուայում, Ընկ. Կովկասի Վարչութեան մէջ՝ Թիֆլիզում (Վելեամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հասարակութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Ալեքսանի, Թեոդոր Ալեքսանդրովիչ Իւանովի բնակարանում։ (100—50)

„ԹԱՏՐՈՆ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՊԱՏԿ. ՀԱՆԴԷՍ

Ներկայ 1895 թուակ. II-րդ №-ը լոյս կը տեսնէ մինչև առաջիկայ դեկտեմբ. 15-ը։

Բովանդակութիւն՝ «Բաղդասար աղբար» կոմ. 3 գործ. Պարոնեանի, «Հասարակութեան նեցուկները» դր. 4 գործ. Իբսէնի, «Դօն-ժուան» Պուշկինի, Մօցարտի մանկութիւնը մանկ. պիես 1 գործ. Հայերէն պիէսների լիակատար ցանկը, և մի շարք այլ յօդուածներ։

Հրատարակիչ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ

Հասցէն՝ Тифлисъ. Александру Тарханьянъ, կամ Tiflis, A. Tarkhanian.

«Թատրոն»-ի առանձին № №-ը բացառապէս վաճառվում են «Կենդրոնական գրավաճառանոցում», իւրաքանչիւր №-ը 2 ռուբլի։

„ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄԸ“ (ԹԻՖԼԻԶ)

ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.—

	Ռ.	Կ.
Ալիշան Հ. Ղ. վ. Հայրուսակ. գինն է	3	75
Այվազեան Բ. Տանջանքի բովից, վէպ իրական կեանքից. գինն է	—	30
Անդերսէն. Վայրի կարապներ. գինն է	—	8
Բարխուդարեան Ց. (մանկավարժ) Մանկական խաղեր. գինն է	—	50
Գարագաշեան. Քննական պատմութիւն Հայոց. 4 հ. գինն է	4	—
Դիկկէնս. Օլիվէր Տվիստ. պատկերազարդ վէպ. գինն է	—	40
Երզնկեան Գրիգորիս. Պատմութիւն մանկավարժութեան. գինն է	1	—
Լուսայ. Դաբոյի ընտանիքը, վէպ Թիֆլիզի կեանքից. գինն է	—	60
Խրիմեան Հայրիկ. Ծամանակ և խորհուրդ իւր. գինն է	—	15
Ճուղուրեան սարկ. Մոռացուած աշխարհ. 2 հ. գինն է	1	—
Մամիկոնեան, Հազարից մէկը, վէպիկ. գինն է	—	60
Մկրտումեան Գ. Ք. (թարգմ.) Դրօշակ	—	8
Մարտիրոսեան. (անփորձ Դէօ). Վարդ և սոխակ. գինն է	—	30
Մօնգօմերի. Երկու եղբայր, վէպիկ. գինն է	—	60
Ցարութիւնեան Իս. Համառօտ տրամաբանութիւն, գինն է	1	—
Շէքսպիր. Ինչպէս կուզէք, թատր. հինգ արարուածով. գինն է	—	50
Շիլլէր. Մարիա Սթիւարտ. ողբերգ. հինգ գործողութեամբ. գինն է	—	50
Պարոնեան Ց. Մեծապատիւ մուրացկանները, երկ. տպ. գինն է	—	40
Պէյլիքճեան. Ընկեցիկը. նորավէպ. գինն է	—	15
Պալասանեան. Պատմութիւն Հայոց. երկ. տ. գինն է	1	50
Սառիկեան. Համառօտ ցուցմունքներ դասատրակութեան պատրաստուողների համար (թարգմ.) գինն է	—	30
Սպիրի. Այծարած Մօնէ. գինն է	—	15
Տուրգենև. Սրձակ բանաստեղծութիւններ, թարգ. Աղ. Ծատուրեանի. գ.	—	50
ԲաՀՔՔի. Տանկահայք. գինն է	—	40
» Խամսայի մեկնութիւնները (1600—1827) երկ. տպ. գինն է	1	75
» Զահրումար. վէպ Թիֆլիզի հայերի կեանքից. գինն է	2	—
Քամալեանց Ս. Աստուած չճանաչող. գինն է	—	10
» Գալօ-Ափօ	—	10
Քիշմիշեան Ա. Նախապիտելիք բուսաբանութեան. գինն է	—	80
Ուսկոկներ՝ ռուսերէնից. գինն է	—	35

(5—5)

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ԹԻՖԼԻԶԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻ

31-ն Նոյեմբերի 1895 թ.

ՊԱՀԱՆՋՔ	Թիֆլիզում:		Բաժիններում:		Ընդամենը:	
1. Դրամարկղ (առձեռն թղթադրամ)	151,557	09	163,431	17	314,988	26
2. Ընթացիկ հաշիւ պետական բանկայի բաժնում	407,121	20	340,600	—	747,721	20
3. Զեղչումն (Disconto) մուրհակաց երկու ստորագր.	3,189,242	26	1,988,799	17	4,278,041	33
4. Զեղչ. մուրհակաց մի ստորագր. ապահոված Տոկոս թղթ.	339,167	66	—	—	339,167	66
5. Զեղչումն տոկոսաբեր թղ., կտրօնների և այլն.	37,208	53	6,180	25	43,388	78
6. Փոխատուութիւն դրաւականով՝						
ա) Պետութ- ապահ. տոկոսաբեր թղթերի	1,510,337	27	582,189	59	2,092,526	86
բ) „ ոչ „ „ „	272,754	—	24,100	—	296,854	—
գ) Ապրանքների	—	—	772,563	51	772,563	51
դ) Ոսկու և արծաթի	—	—	4,376	86	4,376	86
7. Բանկայի պատկանեալ տոկոսաբեր թղթեր	1,082,456	30	100,324	14	1,182,780	44
8. Ոսկի և արտասահմանի փոխանակագրեր	262,526	44	44,389	27	306,915	71
9. Տոկոսաբեր թղթեր պահեստի դրամագլխի	255,917	70	—	—	255,917	70
10 Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	14,187,161	76	—	—	14,187,161	76
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	19,116,962	60	—	—	19,116,962	60
11, Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	996,185	14	—	—	996,185	14
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	—	—	1,763,422	40	1,763,422	40
12, Դնումն և վաճառումն արժեթղթերի ըստ յանձնարարութեան	136,000	—	—	—	136,000	—
13, Պայմանաժամն անցուցած փոխատուութիւն	31,926	—	15,715	—	47,641	—
14. Բողոքուած մուրհակներ	17,500	—	150	—	17,650	—
15. Ընթացիկ ծախսեր	50,462	35	40,388	56	90,850	91
16. Կահ-կարասիք և սկզբնական ծախսեր	3,129	56	7,481	98	10,611	54
17. Ցետ ստացուելիք ծախսեր	9,142	72	7,359	68	16,502	40
18. Անշարժ կալուածք	—	—	50,082	15	50,082	15
Ռ. Ա.	42,056,758	48	5,011,553	73	47,068,312	21

ՊԱՐՏՔ	Թիֆլիզում:		Բաժիններում:		Ընդամենը:	
1. Հիմնական դրամագլուխ	1,000,000	—	—	—	1,000,000	—
2. Պահեստի դրամագլուխ	255,974	69	—	—	255,964	69
3. Դրամագլուխ անշարժ կայքի շինվածքի	—	—	1,229	88	1,229	88
4. Դրամական ադանդներ՝						
ա) Պայմանաժամով	4,488,144	—	1,460,814	—	5,948,958	—
բ) Ցպահանջ	268,199	—	141,700	--	409,899	—
գ) Ընթացիկ հաշուով, հասարակ	1,138,140	36	1,921,506	32	3,059,646	68
դ) „ „ պայմանաւոր	—	—	218,493	69	218,493	69
5. Թղթակիցներ՝						
ա) Նոցա հաշիւը (Loro)	14,107,225	64	—	—	14,107,225	64
բ) Բանկայի հաշիւը (Nostro)	18,534,258	74	—	—	18,534,258	74
6. Բաժինների հաշիւը Կենդրոնական վարչութեան հետ	—	—	1,060,370	49	1,060,370	49
Կենդրոնական վարչութեան հաշիւը բաժինների հետ	1,865,948	20	—	—	1,865,948	20
7. Բանկայի բաժնատոմսերի անվճար կտրօնների բաշխը	4,162	45	—	—	4,162	45
8. Չվճարուած տոկոսներ ադանդների ընթացիկ հաշիւների և այլ գործողութիւնների	124,448	62	61,336	23	185,784	85
9. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ	216,390	86	102,391	04	318,781	90
10. Փոխանցիկ դումարներ	53,875	92	43,712	08	97,588	—
Ռ. Ա.	42,056,758	48	5,011,553	73	47,068,312	21

Дозволено цензурою Тифлисъ, 23-го Ноября 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.